

12/182

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Ի. ԿՈՐԴԵՅԵՎ

ԵԿՉ ՊԵՏԵ ԻՄԱՆԱ

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ Ը
ԿԱՐՄԻՐ ՆԱՎԱՏՈՐՄԻ ՄԱՍԻՆ

Թարգմ. Լ. Ա. Բ.

359(47)

4 - 81

ՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ - 1927

1 MAR 2010

359(47)

22 MAR 2013

9-81

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Ի. ԳՈՐԴԵՅԵՎ

Ի Ն Չ Պ Ի Տ Ի Ի Մ Ա Ն Ա

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆԸ

ԿԱՐՄԻՐ ՆԱՎԱՏՈՐՄԻ ՄԱՍԻՆ

40008
36526

Թարգմ. Լ. Պ. Ա.

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՅՈՒԹՅՈՒՆ - ՅԵՐԵՎԱՆ - 1927

ԻՆՉՈ՞Ւ ՀԱՄԱՐ Ե ՀԱՐԿԱՎՈՐ ՄԵԶ
Ն Ա Վ Ա Տ Ո Ր Մ Ը.

ԿԱՐՄԻՐ ՆԱՎԱՏՈՐՄԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԻՍՅՄ
ԾՈՎԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՊԱՇՏՈԱՆՈՒԹՅԱՆ
ՅԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱՐԵՎԱՏՐԻ ՀԱՄԱՐ.

Խորհրդավին Սոցիալիստական Հանրապետությունների Միությունն անձայրածիր տարածություններ և բռնում։ Նա յերկրի ցամաքի մի վեցերորդ մասն և գրավում։ Նրա տասնյակ-միլիոնավոր բնակչությունը, ինչպես նաև Հայաստանի բնակչությունը, բնավ ծով չեն տեսել։ Ազդ պատճառով համոզում ե տիրում, թե «ԽՍՀՄ ցամաքային յերկիր ե»։ Իսկ ցամաքային յերկրի համար ծովալին նավատորմը չունի, կամ զրեթե չունի վորելիցե նշանակություն...

Անպայման մխալ ե նման գատողությունը։
ԽՍՀՄ սահմանների քառասուն չորս հազար վերսուք ծավերն ու ովկիանուսներն են վաղողում։

Ծովը մեր սահմանների յերկարության մոտ յերկու յերրորդն ե բոնում: Յամաքին միայն մի յերրորդն ե բաժին ընկնում:

Իսկ այդ նշանակում ե, վոր մեր սահմանների յերկու յերրորդը ծովից մատչելի յե հարձակման: Մեր թշնամինները մեր ծովալին սահմանների այդ տասնյակ-հազարավոր վերստերի ուղած կետում կարող են, - յեթե մենք ծովալին զինված ուժ չունենանք, - ցամաք հանել իրենց զորքերը և յերկրի ներսը թափանցել:

Այդ նշանակում ե, վոր ծովալին կարմիր նախատորմի բացակայությունը գերազույն սպառնալիքի տակ ե դնում մեր աշխատավորական պետության անվտանգությունը և նույնիսկ դոլությունը:

Բայց կարմիր նախատորմի գերը միայն մեր ծովալին սահմանների անվտանգությունն ապահովելով չի սահմանափակվում: Նա պակաս նշանակություն չունի նաև մնացած աշխարհի հետ մեր առետրական հարաբերությունների համար:

Ծովերը, բաժանելով աշխարհները, միացնում են այդ աշխարհներում բնակող ժողովուրդներին: Առետրական ծովալին ճանապարհներն ամենից եժան և ամենահարմարն են: Ծովալին մի մեծ շողենավի ատրոպությունը հավասար ե արդանքատար յերեք մեծ գնացքի տարտղության:

Իսկ ժամանակակից ովկիանոսալին մի մեծ շողենավ այնքան բեռ ե տեղափորում իր մեջ, վորքան ընդունել կարող են առլրանքատար քառասուն մեծ գնացք, վորոնցից յուրաքանչյուրն ունենա վաթսուն վագոն: Ծովալին փոխադրությունները ցամաքայիններից 12 անդամ եժան են նստում: Յերկաթուղավին փոխադրության համեմատությամբ ծովալինի եժանությունը նրանով ե բացատրվում, վոր նավերի համար պետք չե հասուլ ճանապարհներ կառուցել, վորոնք շինվածքի և պատշաճ դրության մեջ պահելու ահազին միջոցներ են պահանջում (պատերազմից առաջ յերկաթուղավին ճանապարհի մի վերատի կառուցումը վուկով հարյուր հազար ոռուբրուց ավելի յեր նստում):

Ուստի և զարմանալի չե, վոր պատերազմից առաջ ԽՍՀՄ ամբողջ առեւտրի յերկու յերրորդը ուրիշ պետությունների հետ ծովով եր կատարվում: Ամբողջ արտածման $70^0/_$ ը և ներմուծման կեսից ավելին կատարվում եր ծովալին ճանապարհով:

Այժմ մեզ համար ավելի յե մեծացել ծովալին ճանապարհների նշանակությունը: Գերմանիան, մեր հում նյութի գլխավոր սպառողներից և մեզ անհրաժեշտ մեքենաների ու արդյունաբերական այլ բանվածքների մատակարարներից մեկը, այժմ

մեղնից անջատված ե մի շարք ուրիշ պետություններով: Մեր արտաքին առևտուրն Անդլիացի, Ֆրանսիացի, Իտալիացի, Ամերիկացի և ուրիշ լերկրների մեծ մասի հետ նույնպես միայն ծովով ե հնարավոր:

ԲԱԼԹԻԿ ԾՈՎԻ ԿԱՐՄԻՐ ՆԱՎԱՏՈՐՄԸ.

Չի կարելի խորհրդացին պետության արտաքին առևտուրն ապահովել առանց ռազմական նավատորմի: Այդ ամենից լավ լենինգրադի որինակով ե ապացուցվում: Լենինգրադը մեր առևտրական ամենամեծ նավահանգիստն ե: Նա Խորհրդացին Միության ամբողջ տերրիտորիացի հետ կապված է յերկաթուղարին և ջրային ճանապարհներով: Նա մոտիկ է մեր հյուսիսային անտառային մարդերին: Լենինգրադում շատ խոշոր գործարաններ ու ֆաբրիկաներ կան: Լենինգրադը բաղաքակրթական ու քաղաքական խոշորագույն կենտրոն է, պրոլետարական հեղափոխության որորանը: Լենինգրադը միաժամանակ բալթիական ծովափի՝ մեզ պատկանող փոքրիկ մասի վրա՝ մեր միակ վաճառականական նավահանգիստն ե:

Մինչեւ Ֆիննական նեղ ծոցի յերկու ափը, վորոնց միջով անցնում ե Լենինգրադի ծովային ճանապարհը, մեզ չեն պատկանում. հյուսիս-

յինը ողատկանում և Ֆինլանդիային, և գլեթե վողջ հարավայինը՝ Եստոնիային: Ֆինլանդիան ու Եստոնիան փոքր և տնտեսապես թույլ պետություններ են: Նրանց քաղաքականությունը կախումն ունի կապիտալիստական խոշոր պետություններից, վորոնց «բարեկամական զգացմունքները» Խորհրդացին Միության բանվորներն ու գյուղացիները բավականաշափ զգացել են իրենց ուսերին: Եստոնիան ու Ֆինլանդիան այդ մեծ գիշատիչների ճնշման տակ հեշտությամբ կարող են մեր նավերի համար փակել Լենինգրադից զնացող ծովային ճանապարհը: Միայն Բալթիկ ծովի կարմիր նավատորմը, վոր իվլիճակի կլինի նրանց պատշաճ կերպով դիմագրավելու, կարող ե նրանց յետ պահել նման թշնամական քայլից և ազատել մեզ մեր ծովային հարեւանների քաղաքական ու տնտեսական կախումից:

Հենց Լենինգրադի պաշտպանությունը, վոր իր աշքի ընկնող նշանակության շնորհիվ այնքան կարենոր ե մեզ համար, միայն այն ժամանակ է հնարավոր, յերբ դրա համար բավականաշափ ուժեղ նավատորմ ունենանք: Լենինգրադի ծովային մատուցները մեր ռազմական նավահանգիստ կրոնշտադտն ե պաշտպանում: Սակայն չպետք ե աշքաթող անել, վոր Փինլանդական սահմանից մինչև Լենինգրադ միայն մի որվա-

համապարհ ե, իսկ եստոնականից՝ վեց որվա:

Իսկ ինչպես կարող ե խորհրդալին պետությունը մեր հարևաններին իր վրա հարձակվելուց իետ պահել: Միմիայն իր թշնամիներին դաժան հարվածներ հասցնելու ընդունակությունով:

Ֆինլանդիայի վերաբերմամբ, վորի խոշորագույն քաղաքներն ու մայրաքաղաքը Ֆիննական ծոցի ափին են գտնվում, նման հնարավորություն միմիայն ուազմական նավատորմի ներկայությունն ե ստեղծում, վոր պատրաստ լինի պատշաճ հականարվածը տալու թշնամուն: Խորհրդային ուազմունակ նավատորմը Ֆինլանդիային կստիպէ ձեռնպահ մնալ մեզ վրա հարձակվելուց և լավդույն միջոցը կլինի նրա և ԽՍՀՄ միջն խաղաղ հարաբերություններ ապահովելու համար:

Ինչ եստոնիային ու Լատվիային ե վերաբերում, այստեղ ել հանգամանքները զրեթե նույնն են: Նրանց, ճիշտ ե, շահազրդում են առևտրական խաղաղ հարաբերությունները մեզ հետ: Նրանց Ռեկել և Ռիգա նավահանգիստներով, մասնավանդ ձմեռ ժամանակ, յերբ Լենինգրադի նավահանգիստը սառում ե, անցնում ե մեր արտածման և ներմուծման մեծ մասը: Բայց մենք յերբեք չենք կարող հավատացած լինել, թե այդ պետություններն ել, կապիտալիստական ուժեղ յերկրների աղղեցությամբ, մեզ դեմ մղվող պայ-

քարի մեջ չեն քաշվի: Այդ դեպքում մեր Կարմիր նավատորմը կրկնակի ծառայություն կարող ե անել — գործող Կարմիր բանակի ծովին հենվող թերին ողնել և թեր կողմից սպառնալ հակառակորդի բանակներին:

Առաջին հայացքից վորքան ել վոր տարորինակ յերեա, սակայն Կարմիր նավատորմը մեծ դեր ե խաղում մեր և Լեհաստանի վոխհարաբերությունների մեջ: Լեհաստանն անկարող կլինի մեր դեմ տեսական պատերազմ մղել, յեթե շարունակ սպառազինում և մատակարարում չստանա կապիտալիստական հզոր յերկրներից: Բայց Լեհաստանի հետ ունեցած պատերազմի փորձից մենք արդեն գիտենք, վոր գերմանական պրոլետարիատն ամեն կերպ կընդդիմանա գերմանական տերրիտորիայով Լեհաստան զենք և մեր դեմ պատերազմելու համար անհրաժեշտ ամեն ինչ անցկացնելուն: Այդ դեպքում կմնա Լեհաստանին ծովային նավահանգիստ Դանցիգի միջոցով մատակարարելու հնարավորությունը: Հենց այստեղ ե, վոր յերեան կգա Բալթիական Կարմիր նավատորմի նշանակությունը, վորը միմիայն իվիճակի յե խափանելու Լեհաստանի մատակարարումը ծովից, այն դեպքում, յեթե նա մեզ հետ պատերազմի:

Հետեւաբար Բալթիկ ծովի Կարմիր նավատոր-

մը մեծ նշանակություն ունի նաև լեհաստանի հետ մեր խաղաղ հարաբերություններն ապահովելու համար:

Բալթիկ ծովի կարմիր նավատորմը մեզ համար կարեռ ե ահա թե ելի ինչու: Բանն այն ե, վոր մենք հյուսիսում միայն մի չսառչող նավահանգիստ ունենք՝ Մուրմանսկը, վոր Սառուցյալ ովկիանոսի ափին ե գտնվում: Մուրմանսկի նավահանգիստը մեծ նշանակություն ունի, վորովհետև հարուստ ձկնորսարանների շրջանում ե գտնվում, մոտիկ ե Նորվեգիային և իրեն մոտիկ գտնվող անտառով հարուստ մարզի համար արտահանության ամենահարմար կետն ե: Բացի այդ, այդտեղով ձմեռը կարելի յե ուղարկել այն ապրանքները, վոր ամառը Արխանգելսկի և Սպիտակի ծովի ուրիշ նավահանգստների վրայով ե գնում:

Մինչդեռ Մուրմանսկը ԽՍՀՄ մնացած հողամասի հետ միացած ե լենինգրադով անցնող լերկաթուղային գծով միայն, Մուրմանսկի լերկաթուղին միքանի տեղ Ֆինլանդիայի սահմանից ամենաշատը 40 - 50 կերստի վրա յե: Այդ կողմից Ֆինլանդիայի գորքերը մեծ դուրսությամբ կարող են կարել զիծը: Բալթիկ ծովի կարմիր նավատորմը իւտ պահելով Ֆինլանդիային ԽՍՀՄ վրա հարձակվելուց, դրանով իսկ ապահովում ե մեզ

համար կարևոր Մուրմանսկի ծովային հյուսիսային ճանապարհը:

Յեթե բավականաչափ ուշադրություն լինի գերի նա, Բալթիական կարմիր նավատորմը կկարողանա իր վրա դրված խնդիրները կատարել, յեթե նույնիսկ նրա դեմ միատեղ գործեն ֆինլանդիան, Եստոնիան, Լեհաստանը և Շվեդիան: Հազիվ թե կարելի լինի յենթադրել, վոր ծովային հղոր պետություններից մեկն ու մեկը ԽՍՀՄ դեմ կռվելու համար ուժեղ նավախումբ ուղարկի: Մեծ պետությունների հակամարտությունը համաշվարհային շուկայում դրան կիսանգարի: Բայց յեթե նույնիսկ ծովային աչքի ընկնող ուժեք հայտնվելին Ֆիննական ծոցում, փոքրիկ, բայց ամուր համախմբված Բալթիկ ծովի նավատորմը Ֆիննական ծոցի պաշտպանության բարենպաստ պայմաններում և իր խարսխի (բազայի)՝ Կրոնշտադտի բերդի ու նրա ամրոցների չափազանց նպաստավոր գիրքի շնորհիվ կարող ե թշնամուց պաշտպանել Ֆիննական ծոցի խորհրդակին ափը:

ՄԵՎ-ԾՈՎԵՅԱՆ ԿԱՐՄԻՐ ՆԱՎԱՏՈՐՄԸ.

Մեծ են նաև մեր սեծովան զինված ուժին առաջադրած խնդիրները: ԽՍՀՄ հարավային՝

մը մեծ նշանակություն ունի նաև լեհաստանի հետ մեր խաղաղ հարաբերություններն ապահովելու համար:

Բալթիկ ծովի կարմիր նավատորմը մեզ համար կարևոր է ահա թե ելի ինչու: Բանն այս է, վոր մենք հոռափիստ միայն մի չսառչող նավահանգիստ ունենք՝ Մուրմանսկը, վոր Սառուցալ ովկիանոսի ափին ե գտնվում: Մուրմանսկի նավահանգիստը մեծ նշանակություն ունի, վորովինետև հարուստ ձկնորսարանների շրջանում ե գտնվում, մոտիկ ե Նորվեգիային և իրեն մոտիկ գտնվող անտառով հարուստ մարզի համար արտահանության ամենահարմար կետն ե: Բացի այդ, այդաեղով ձմեռը կարելի յե ուղարկել այս ապրանքները, վոր ամառը Արխանգելսկի և Սպիտակ ծովի ուրիշ նավահանգստների վրայով ե գնում:

Մինչեւ Մուրմանսկը ԽՍՀՄ մնացած հողամասի հետ միացած ե լենինգրադով անցնող լերկաթուղարին գծով միայն, Մուրմանսկի յերկաթուղին միքանի տեղ Ֆինլանդիայի սահմանից ամենաշատը 40-50 վերստի վրա յե: Այդ կողմից Ֆինլանդիայի զորքերը մեծ զյուրությամբ կարող են կարել զիծը: Բալթիկ ծովի կարմիր նավատորմը յետ պահելով Ֆինլանդիային ԽՍՀՄ վրա հարձակելուց, դրանով իսկ ապահովում ե մեզ

համար կարևոր Մուրմանսկի ծովալին հյուսիսալին ճանապարհը:

Յեթե բավկանաչափ ուշագրություն լինի գեպի նա, Բալթիական կարմիր նավատորմը կկարողանա իր վրա դրված խնդիրները կատարել, յեթե նույնիսկ նրա գեմ միատեղ գործեն ֆինլանդիան, Եստոնիան, Լեհաստանը և Շվեդիան, Հազիվ թե կարելի լինի յենթագրել, վոր ծովալին հզոր պետություններից մեկն ու մեկը ԽՍՀՄ գեմ կովելու համար ուժեղ նավախումբ ուղարկի: Մեծ պետությունների հակամարտությունը համաշխարհալին շուկայում դրան կխանգարի: Բայց յեթե նույնիսկ ծովալին աչքի ընկնող ուժեր հայտնվելին ֆիննական ծոցում, վորքրիկ բայց ամուր համախմբված Բալթիկ ծովի նավատորմը ֆիննական ծոցի պաշտպանության բարենպատ պայմաններում և իր խարսխի (բաղադի)՝ Կրոնշտադտի բերդի ու նրա ամրոցների շափականց նպաստավոր դիրքի շնորհիվ կարող ե թշնամուց պաշտպանել ֆիննական ծոցի խորհրդալին ափը:

ՄԵՎ-ԾՈՎՅԱՆ ԿԱՐՄԻՐ ՆԱՎԱՏՈՐՄԸ.

Մեծ են նաև մեր սկզբովան զինված ուժին առաջադրած խնդիրները: ԽՍՀՄ հարավալին՝

հացով, ածիով, նավթով, հանքերով ու աղով հարստա մարզերը Սկ ու Ազով ծովերի ափերի հետ միացած են յերկաթուղիների և այդ ծովերը թափող Դնեպր և Դնեն մեծ գետերի ջրալին սիստեմների բավական խիտ ցանցով: Բնական մեծ հարստություններ ունեցող Ուկրալինան և Կովկասը սկ-ծովան Ողեսսա, Նիկոլայի, Սևաստոպոլ, Նովոռոսսիսկ, Բաթում, Թեոդոսիա, Խերսոն, Մարիուպոլ խոշոր վաճառականական նավահանդիսաների միջոցով կապված են Արևմտյան Յեփրոպալի արդյունաբերական ամենահարուստ յերկրների հետ, վորոնք մեր հում նյութի սպառողներն են: Հիշյալ մարզերի պաշտպանության կենսական նշանակությունը նման պայմաններուն բոլորովին ակներև ե դառնում:

Սկ ու Ազով ծովերի ափերն ահազին յերկայնք ունեն՝ 1400 վերսաւ: Այդ ափերի ցամաքալին պաշտպանության համար միլիոնանոց բանակ կպահանջմբր: Ծովալին զինված ուժերի ամուր միջուկն ըստ ամենայնի ընդունակ ե այդ խընդիրն ավելի քիչ ծախքով հաղթահարելու: Սկ-ծովան նավատորմն իմպերիալիստական պատերազմի ժամանակ սկ-ծովան ափի պահպանության ու պաշտպանության գործից միլիոնանոց բանակ ազատեց և Թյուրքիային սահմալեց կոստանդնուպոլսի մոտ պահել չորս զորամարմին:

Պատերազմի ժամանակ Սկ-ծովան նավատորմի ղահելու ծախսը յերկու զորամարմի ծախսից քիչ եր: Սկ-ծովան նավատորմին սպասարկող մարդկանց թիվը պատերազմի ժամանակ գրեթե յերկու անգամ քիչ եր մի զորամարմի մարդկանց թվից: Ի՞նչ հսկալական տնտեսում միջոցների և մարդկանց:

Սկ-ծովան կարմիր նավատորմի բացակայությունն առանձնապես ծանր զգացվում եր 1920 թվականին, յերբ Անդրիայի և Ֆրանսիայի նավերը Ղրիմում գտնվող զեներալ Վրանգելին բերում եցին խորհրդալին պետության բանվորներին և զուղացիներին մահ նյութող և ստրկացնող հրացաններ, սավառնակներ և հրանոթներ: Մենք առանց նավատորմի չելինք կարող խանգարել արդ: Մեզ միայն մնում եր ատամ կրծտեցնել, վորովհետև Սկ ծովի խորհրդալին նավահանգստներում նույնիսկ մի հատիկ սուզանավ չկար:

Սկ ծովի վրա մեր ամենահավանական հակառակորդը բոյարական Ռումինիան եւ Նրա նպատակը կարող ե լինել՝ զրավել Ողեսսան, Նիկոլայեր և Խերսոնը: Այդ նավահանգստների հափշտակությունը վոչ միայն մեր արտաքին տոետրին հասցըած մեծ հարված, այլև ռազմական զդալի պարտություն կլիներ, վորովհետև արդ

դեպքում ծովի կողմից կրացվեր Թումինիայի
գեմ գործող Կարմիր բանակի ձախ թեր: Ահա
թե ինչու Սև ծովի մեղ պատկանող ափի ան-
փառնությունն ապահովելը Սև ծովան Կարմիր
նավաստորմի կարեռագույն խնդիրներից մեկն է:

Անձրաժեշտ և նույնպես ավելացնել, վոր 1923
թվականին Անտանտայի կողմից Թյուրքիայի վզին
փաթաթած Լոզանի գաշնազրով վերջինս իրա-
վունք չունի ուրիշ պետությունների ուղղմական
նավասորմերին արգելելու Դարդանելի և Բոս-
ֆորի նեղուցներով Սև ծովի անցնելը Խորհրդա-
ցին պատգամավորությունը, վորը նույնպես ներ-
կա լեր Լոզանի կոնֆերենցիայում, ամբողջ աշ-
խարհի առաջ մերկացրեց, վոր «նեղուցների ա-
զատություն» այլ բան չի նշանակի, քան Ան-
տանտայի ուղղմանավերի համար ազատություն՝
Սև ծովում տիրություն անելու և գնդակոծ ա-
նելու նրա ափերին գտնվող նավահանգստները,
մի բան, վոր հակասում է թե Թյուրքիայի և թե
ԽՍՀՄ շահերին: Սակայն Անտանտայի «քաղա-
քակիրթ» և «լուսավորված» պետություններն
այդ վեճի մեջ իրենց արդարությունն ապացու-
ցում ելին, հենվելով իրենց ծովային գորավոր
սպառազինություն մերի վրա: Թուլլ Թյուրքիան այդ-
պիսի «ապացուց» չուներ, և նրան այլ բան չեր
մուտք, բան բարարել Անտանտայի պահանջ-

ները: Մենք մի բովե անգամ չպիտի մոռանանք,
վոր «նեղուցների աղատությունը» ուզած մոմեն-
տին կարող ե փառնդ ստեղծել մեր սև ծովան
ափերի համար: Սև-ծովիան Կարմիր Նավաստորմն
իր աշխատանքի մեջ պիտի հաշվի առնի այդ
փառնդը և պատրաստ լինի նրան դիմագրա-
վելու:

ԿԱՍԹԻՑ ԾՈՎԻ ԾՈՎԱՅԻՆ ՌԻԺԵՐԸ

Կովկասյան նավթն իր ներքին սպառողներին՝
ֆաբրիկաներին, գործարաններին, լերկաթուղի-
ներին հասցնելու դիմավոր ճանապարհներից մե-
կը Բագվից Կասպից ծովով Աստրախան և այն-
տեղից Վոլգայի ջրավին սիստեմով ձգվող ճանա-
պարհն եւ Բագու-Աստրախան ծովային ճանա-
պարհն ապահովելու համար Կասպից ծովում
անհրաժեշտ և ծովային զինված ուժ:

Բագվի նավթը մեր թշնամիներին հանգիստ
չի տալիս: Նրանք քնում և լերազում տեսնում
են Բագուն իրենց զիշատիչ թաթերի մեջ: Բա-
գագացիական կովի ժամանակ, լերը Կովկասի
տերերը մենշևիկներն ելին՝ անզլո-ֆրանցիուկան
կապիտալի հետ դաշնակցած, Անդիխան հնար
գտավ ցամաքով Կասպից ծով հասցնել ծովային
մանր նավեր: Նա մի վոտն արգեն զրեց այդ

ծովի վրա: Հաղթական բանվորներն ու գլուղացիները նրան արդառեղից զուրս շպրտեցին մենչեկների հետ մեկտեղ: Բայց այդ փորձը պիտի հաշվի առնվի: Չնայած նավթը խիստ գայթակղեցնող հոտ ունի, սակայն անգլիական նավերը կասպից ծովում գործ չունեն: Դրան հետեւելը կասպից ծովի մեր ծովալին ուժերի գործն է:

Կասպիական ծովալին ուժերին բաժին ե ընկում նույնպես Պարսկաստանի հետ մեր ծովալին առևտրական հարաբերությունները պաշտպանելու խնդիրը: Ազդ հարաբերությունները տարեցտարի ավելի ու ավելի կենդանություն են ստանում և ունեն վոչ միայն տնտեսական, այլ և քաղաքական խոշոր նշանակություն՝ մեր բարեկամական կապերը Արևելքի հարստահարված ժողովուրդների հետ զարգացնելու և ամրապնդելու տեսակետից:

Կասպից ծովի հարինգը (սելցոդկա) և վորլան խորհրդացին պետության միջինավոր բնակչության ուտելիքն են: Զկնորսությունը կերակրում ե տեղական միջինավոր բնակչությունը: Առանց ծովին իշխելու չի կարելի ձկնալին հարստություններն ել տիրել: Հենց այս և վորոշում մեր կասպից կարմիր նավատորմի մի խնդիրն էս:

ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՆԱՎԱՏՈՐՄԸ

Խաղաղ ովկիանոսի մեջ պատկանող ծովափը հարուստ է ձկնորսարաններով և բնական հարըստություններով: Նրանց հափշատակողը, առաջին հերթին, Յապոնիան է: Մեր խաղաղ-ովկիանուան ծովափի պահպանությունն ու պաշտպանությունը, ինչպես և Հեռավոր Արևելքի հարըստությունների ապահովությունը՝ Հեռավոր Արևելքի ծովալին ուժերի խնդիրն է:

*

Գաղափար կաղմանով ԽՍՀՄ համար կարմիր նավատորմի նշանակության մասին, այժմ անցնենք ծանոթանալու այն բանի հետ, թե ինչ ե ներկայացնում ժամանակակից նավատորմը, ինչ տարրերից ե բաղկացած, ինչ խնդիրներ են դրվում նրա ռազմական առանձին միավորների վրա, և կովի ինչ միջոցներ ունեն նրանք:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՆԱՎԱՏՈՐՄԸ.

ՆԱՎԵՐԸ.

Ռազմանավերն ըստ իրենց հատկությունների և առաջադրված նպատակների դասերի յեն բաժանվում: Մենք կսահմանափակվենք ժամանակակից ռազմանավերի գլխավոր դասերը թվերով:

Ժամանակակից ռազմա-ծովագին ուժի հիմքը և նավատրմի ռազմական գլխավոր միավորը զծանավն ե, վորի խնդիրն ե՝ մարտնչել շարքում (կամ զծում): Գծանավը, այլապես զրեղնուուտ կոչվածը (ժամանակակից զծանավերի տիպով կառուցված առաջին նավի անունով) ուժեղ հրետանի ունի տասից ավելի 14—16 դրույմանոց թնդանոթ և շատ հաստ զրահ՝ մինչև 18 դրույմ հաստությամբ: Նրա արագությունը 20 հանգուցից* ավելի յէ: Նրա յերկարությունը 200 մետրի յէ համառում: Զորախմբի թիվը — մինչև 1500 մարդ: Ժամանա-

* «Նավը 20 հանգուց և անում», այսինքն՝ նավը մի ժամում ծավալին 20 մղոն և գնում: Ծովային մղոնը մոտ 1,8 կիլոմետրի յէ հատուար:

կակից գծանավի (այսպես կոչված զերով եղնոութի) կառուցումը վսոկով տասնչակ-միլիոնավոր ոուբլի յէ նստում:

Դժային հածանավն իր տիպով և չափով գծանավին նման է: Բայց նրա հրանոթների թիվը և զրահի քաշը պակասեցնելու հաշվին ավելացվում է կաթսաների և մեքենաների քաշը, վորով և ավելի արագաշարժություն և ստացվում: Նրա հիմնական խնդիրն ե՝ հեռավոր հետախուզություն կատարել և իր գլխավոր ուժերից առաջ մարտի բոնվել՝ հակառակորդին գեպի իր գլխավոր ուժերը քաշելու նպատակով: Նրա արագությունը 32 հանգուցիցի յէ համառում: Ջրվանումը*, ինչպես և զծանավի ջրվանումը՝ մինչև 30,000 տոնն **: Հրետանին սովորաբար տասից պակաս խոշոր հրանոթ ունի, վորոնց տրամաչափը *** 15 դրույմից ավելի չե: Գծալին հածանավի զրահի հաստությունը հասնում է 15 դրույմի: Նրա յերկարությունը հաճախ զծանավի յերկարությունից ավելի յէ և համառում է 230 մետրի: Գծալին հածանավի արժեքը մոտավորապես նույնն ե, ինչ զծանավինը:

Թեթեվ հածանավի խնդիրն ե՝ մարտից առաջ —

* Ջրվանում (водоизмещение) կոչվում է նավի քաշը, կամ, վորմինուցն ե, իր վանած ջրի քաշը:

** Տոննը = 62 քթի:

*** Տրամաչափ կամ կալիբր կոչվում է հրանոթի փողանցքի արամագիծը:

մոտավոր հետախուզություն, իսկ մարտում—իր զինավոր ուժերի պաշտպանությունը՝ հակառակորդի ականների և ողաջին գրոհներից, ինչպես և իրենց ականակիրների պաշտպանությունը թշնամու նավատորմի վրա գրոհ տալիս:

Հածանավի հասուկ խնդիրն ե—պաշտպանել իրենց հաղորդակցության ճանապարհները և գործել հակառակորդի հաղորդակցության ճանապարհների դեմ: Հածանավի արագությունը հասնում է 35 հանգուցիցի, ջրվանումը՝ 10,000 տոննից ավելի չե: Հրետանու տրամաչափը 8 գլուխից չի անցնում: Տեղ-տեղ թեթև զրահապատ ե, իսկ չերքեմն ել բոլորովին զրահածածկույթ չունի: Հածանավի համար բնորոշն այն ե, վոր նա գործողությունների լայն շրջան ունի: Պետք ե նաև նշել վոր հածանավերը բավականաշատի հարմարություններ ունեն ականներ դնելու, վորոնց թիվը հաճախ 300 - 400-ի լե հասնում:

Նավախմբային ականակիրն այն ականակիրն ե, վոր բաց ծով ե գուրս գալիս նավախմբի կազմի մեջ: Սա ուղմանավերի ամենաարագընթաց տիպն ե: Նա զինավորապես գործում ե ականներով և վոչ հրետանիով: Ունի մինչև 12 ականի ապարատ, վորոնցից ինքնաշարժ ականներ ե արձակում: Նրա խնդիրներն են՝ հակառակորդի ականակիրների վոչնչացում, ականների գրոհ, գնա-

լու ժամանակ նավախմբի պաշտպանություն սույն զանավերից, արշավի ժամանակ կենդանի կապ, խափանիչ ականներ դարսել, հետախուզություն և գետք: Նավախմբային ականակիրի արագությունը սովորաբար 30 հանգուցիցից ավելի լե և հասնում է 40-ի: Ջրվանումը՝ 1000 - 1600 տոնն ե: Հրետանու տրամաչափը 5 գլուխմից ավելի չե (սովորաբար ավելի պակաս)։ Ջրահապատ չե:

Ականակիրը՝ նույն ե, ինչ վոր նավախմբային ականակիրը, բայց նախանշված ե մարտական գործողությունների համար ափերի մոտերքը: Ջրվանումը, ականի գործիքների թիվը, հրետանին և արագությունը նավախմբային ականակիրինից պակաս են:

Հրետաձիգ նավ—ջրում ծանծաղ նստող համբընթաց (10 – 15 հանգուցից) նավ ե, փոքր ջրվանումով (2000 տոննից վոչ ավելի), նախանշված ե ափերի սպասարկության և գետերի ու լճերի վրա գործելու համար: Հրետաձիգ նավի գլխավոր գործիքը՝ հրետանին ե (տրամաչափը մինչև 6 գլուխմ):

Լողացող մարտկոցի զերն ե՝ ափերի պաշտպանություն և գործողություններ գետերում և լճերում: Ջրում ծանծաղ նստող նավ ե: Լողացող մարտկոցները բաղաքացիական պատերազմի ժամանակ մեծ դեր են խաղացել Վոլգավի, Դնեպրի

և չլուս. Գիմնայի վրաւ Մեր լողարտկոցները
քարշանավեր են, միքանի հրանոթով, վորոնց
արածաչափը 8 դրւումի լե հասնում:

Սուզանավի հատկությունն ե՝ հակառակորդի
դեմ դործել վոչ միայն ջրի լեռեսին, այլև ջրի
տակ: Սուզանավը ջրի լեռեսին գործել կարող ե
թե հրետանիով և թե ականներով, իսկ ջրի տակ՝
միայն ականներով, վորոնք նրա կովի գլխավոր
գործիքն են: Սուզանավի դերը դիրքային կորիչն
ե, այսինքն վորոշ տեղերում հակառակորդի նա-
վերի անցնելուն սպասելը: Սուզանավի ինդիր-
ների թվին են պատկանում ուղղագիտական
հեռավոր հետախուզությունը, հակառակորդին
հետամտելը, նրա անբավարար պաշտպանված
փոխադրանավերի գրոհը և ականային փակոցներ
դնելը: Սուզանավի արագությունը հասնում ե՝
ջրի լեռեսին 20 հանգուցի և ջրի տակը 15
հանգուցի: Ջրի լեռեսից ջրի տակն անցնելու
համար մի ըոսե ժամանակ ե պահանջվում: Ժա-
մանակակից խոշոր սուզանավերի («ստորջրյա
հածանավեր») ջրվանումը 3000 տոննի լե հաս-
նում: Սովորական ջրվանումը 1000 տոննից
պակաս ե: Ականի ապահովատները թվով 5—6
են: Հրետանին թեթև տիպի լե:

Ականահանի դերը դրված ականափակոցները
հանելով ականային դաշտերը վոչնչացնելն եւ

Ականահանությունը կատարվում ե պողպատե
լերկար պարանի (տրոսի) ողնությամբ, վորի
ծալքերը պնդացըած են դուգահեռ գնացող լեր-
կու նավի վրա, իսկ մեջտեղը ջրի տակ լինելով,
բռնում ե գրված ականափակոցները: Ականա-
հանները փոքրիկ ծանծաղանիստ նավեր են:
Նրանց սովորական ջրվանումը 2000 տոննից չի
անցնում: Արագությունը 15 հանգուցի լե հաս-
նում: Հրետանին՝ մեկ լերկու թեթև հրանոթ ե:

Խափանիչները փոքր նավեր են (1500—5000
տոնն), վորոնց գերը ականափակոցներ սարքելն
ե: Նրանք կարող են կարճ ժամանակի լնթաց-
քում վորոշ կարգով մեծ քանակությամբ ական-
ներ (ականային դաշտեր) դնել:

Ավիամայրերը ծառայում են նավախմբերին
հետեւող հիվոռ-այլերովալներ (ծովալին սավառ-
նակներ) փոխադրելու համար: Նրանք հատուկ
սարքավորած տախտակամած ունեն ողալին:
ապահովատների տեղափորման և թոփշքի համար:
Կարող են մինչև 50 սավառնակ ընդունել: Ավիա-
մայրերի արգությունը շատ մեծ ե՝ մինչև 30
հանգուց:

Կոթանիչ մոտորանավերը արագընթաց (մինչև
40 հանգուց), մանր, մեծ մասամբ փայտաշեն
նավեր են, վորոնց խոնդիրն ե՝ պահպանական
ծառայությունը և կապը, ականային զրոները,

սուզանավերի վորսը, նույնպես և ականահանությունն ու ականափակոցներ սարքելը; Զինված են թեթև հրանոթներով, գնդացիրներով, ոռոմբերով և ականներով:

Լրատար նավերը ծառալում են կատ պահպանելու և լուրեր տանելու գործին: Ռազմական սարքավորում և գեր չունեն:

Վարժանավերը նավատորմի անձնական կազմի գործնական ուսուցման համար են: Սովորաբար այս նպատակով ոգտագործվում են ռազմական հետացած նավերը:

Ոժանդակ նավերի թվին պատկանում են ամեն տեսակ փոխադրանավերը, վոր ռազմական դաշնազան բեռներ պահելու և փոխադրելու համար են (ռազմամթերքի, ածխի, նավթատար, նպարակի փոխադրանավեր), ապա վրկիչ նավերը, լողացող հիվանդանոցները, արհեստանոցները և փոքր նավերը:

Ոժանդակ նավերից են նաև ջրագրական նավերը, վորոնք սպասարկում են ծովագնացության զանազան կարիքները (լողալու պայմանների ուսումնասիրություն, փարոսներ և նշանաձողեր դնելը և այլն):

Լողացող նավատորմը սովորաբար նավախըմբերի յե բաժանվում: Նավախմբերը բաղկացած են գծանավերի, գծային հածանավերի, թեթև

հածանավերի բրիգադներից և նավախմբալին ականակիրների, սուզանավերի ու ականահանների դիվիզիաներից կամ առանձին բաժնյակներից: Նավատորմը կարող է նաև բաժանվել առանձին ջոկատների, վորոնց կազմը կամ թերի յե և կամ նման չի նավախմբին: Նավերի յուրաքանչյուր միավորության կազմը վորոշվում է նրան կառավարելու հարմարությամբ և կամ ծովալին դենքի տարբեր տեսակների այնպիսի զուգորդումով, վորն ապահովե նրա լավագույն ոգտագործումը:

Նավատորմի կանգնելու, սննդառության և մատակարարման տեղերը կոչվում են բազաներ: Բազաները նավատորմի համար հարմարավոր, քամիներից և հակառակորդից լավ պաշտպանված կայատեղեր պիտի ունենան: Բազան պետք է ունենա զինանոց՝ մի տեղ, ուր միահավաքված լինեն նավատորմին անհրաժեշտ բոլոր պաշարներն ու նյութերը - վառելիք, ռազմամթերք, գգեստ, նպարակ և մատակարարման այլ տեսակները: Այդ բոլորը պահպանվում են նավահանգստի պահեստներում, վորոնք նավաշինարանների, նորոգման արհեստանոցների, նավամատուցների ու նավակայանների հետ մեկտեղ կազմում են նավահանգիստը:

ՄՈՎԱՅԻՆ ԶԵՆՔԸ

Ժամանակակից ուազմական նախատորմերի մարտական միջոցները հրետանին և ականներն են։ Հրետանու կրակի նպատակն ե՝ ծակել հակառակորդի նավի զրահը, քանդել պայթուցիկ նկութերի նկուղները, մեքենաները, կաթսաները, հրանոթները, սպանել մարդկանց, հրդեհ առաջացնել և այլն։ Հրետանին գործել կարող ե թե անշարժ նավից և թե շարժվողից, թե անշարժ նշանի դեմ՝ տեղում կանգնած նավի, ծովեզրյա (առափնյա) ամրության, ափին գործող բանակի — և թե հակառակորդի շարժվող նավերի դեմ։ Այն բոլորից, ինչ վերևու անված ե ժամանակակից մարտանավերի արագընթացության, սարքավորման և մարտական հզոր զրահավորման մասին — պարզ ե, վոր ծովալին հրետանին պետք ե աչքի ընկնի հսկայական ավերիչ ուժով և արկի թոփչքի հասողությամբ։ Յեզ իրոք, 20 վերտից ավելի հեռավորության վրա 35 վութ քաշող արկով գործող վիթխարի թնդանոթները ծովալին ուազմական նախատորմի մեջ հազվագյուտ բաներ չեն։

Բայց ծովամարտի պայմանները համառորեն պահանջում են, վոր, բացի այդ, հրածգության մեծ արագություն, արագածգություն լինի։ Ազ-

տեղ ոգնության ե զալիս ելեկտրականության ուժը։ Սովորաբար հրանոթներից ավելի մեծերը հատուկ զրահապատած պտավող աշտարակների մեջ են զրվում, ընդունին զրեթե բոլոր անհրաժեշտ աշխատանքը՝ արկերը վերե, աշտարակ հասցնելը, լցնելը և հրանոթների նշանառությունը — ելեկտրոշարժիչների ներդորձությամբ և կատարվում։

Ելեկտրական ուժի ոգտագործումը բացառիկ արագածգություն ե ապահովում։ — հրանոթի 30 փթանոց փականք բանալը, խորությունից 30 փթանոց արկ բարձրացնելը, նրանով հրանոթ լցնելը, փականք կողպելը, կրակելը — այս բոլորը կես բոլոր լե անում…

Վերջին ժամանակներս ծովալին արվեստը հրածգության հասողությունը 100 վերսափ լե հասցըրել։ Հրանոթներից ամենամեծերի արկի կշիռը հասնում է 100 վթի։ Այս թվերը բավականաչափ պատմում են այն ահօնելի ավերածությունների մասին, վորն ընդունակ ե անել ծովալին խոշոր հրետանին։

Հրետանու թուզ կողմն այն հանգամանքն ե, վոր նրա տված ամենամեծ արգունքն այն գեպքումն ե լինում, յերբ զարկում ե նավի վերջրյա, պակելի պաշտպանված մասերին։ Ականի առավելությունն այն ե, վոր նա ընդունակ ե հակա-

ուակորդի նավի ստորջրյա, ավելի թույլ պաշտպանված մասերի դեմ գործել:

Տորպեղոն, ինքնաշարժ ականը կամ այսպես կոչված Ուայտհեղի ականը յերկարուկ ձվածե (սիգարի նման) պողպատե մի մարմին ե, վոր յերեք մասից ե բաղկացած։ Առաջի մասում գտնվում ե լիցը, միջին մասում՝ սեղմած ող և մեքենա, իսկ յետեկի մասում՝ պտուտակները և դեկը։ Ականը դուրս ե մղվում նավի վրա գտնվող հաստակ ականի ապաբարատի միջից։ Ականի ջուրն ընկնելուց հետո միջին մասից ողն սկսում է մեքենայի մեջ անցնել և բանեցնել նրան։ Մեքենան պտուտակներն ե պտտեցնում և զեկերն ե վարում։ Պտուտակների և զեկերի գործողությունը ջրի տակ ականին փորոշ արագության և վորոշ ուղղության շարժում ե հաղորդում։ Ականի առաջի մասը, յերբ մի վորեւ արքելքի յե զարնը վում, պալմիուն ե առաջացնում։

Հրետանու համեմատությամբ ականի թերությունն այն ե, վոր նշանառության, լցնելու և արձակելու համար զգալի ժամանակ և անհրաժեշտ, ինչպես նաև այն, վոր նա ջրի մեջ դանդաղ ե շարժվում։ Հրետանու արկի ողում գործած թոփչքի համեմատությամբ։

Ինքնաշարժ ականներից զատ, վորոնք իրենք են մոռենում հակառակորդի նավին և պտուտա-

նրա կողին դիպչելով, ծովացին նավատորմում գործադրվում են նաև ականափակոցներ, վորոնք վորոշ տեղում սպասում են, վոր հակառակորդի նավի իրենց մոտենա։ Նավից ձգված ականը մնում ե ջրի մակերեսից 6-ից մինչև 18 վոտ-նաշափ խորության մեջ և պարանով (արոս, մին-րեպ) ամրացրած ե հատակին գտնվող խարսխին։ Ականի լիցի պալմիուցիկ նյութի քաշը 10 կիլ յե հասնում։ Ականը պալմում ե կամ հակառակորդի նավի հետ ընդհարվելիս և կամ ափից ստացած ելեկտրական հոսանքով այն պահուն, յերբ հակառակորդի նավին անցնում ե նրա վրա-ցով։

Ականափակոցների հենց անունից կարելի յե դատել այն մասին, վոր նրանց նպատակն ե՝ հակառակորդի նավատորմի ճանապարհը փակել, խափանել։

Ականների գարսվածքը պիտի իրենց նավերին լավ հաջանի լինի, վորպեսզի վերջիններս հնարա-փորություն ունենան անցնել ականափին դաշտե-րի միջով կամ կողքից։ Ականափակոցներ կարող են զրվել վոչ միայն իր, այլև հակառակորդի ծովեղերքին։ Վերջին դեպքում աշխատանքը կա-տարվում ե զաղտագողի, զիշեր ժամանակը մա-սախուղի մեջ և այն։

ՆԱՎԱՏՈՐՄԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ.

Նախընթացից մենք գիտենք, վոր ռազմական նավատորմը հզոր և բարդ տեխնիկական կազմակերպություն եւ Նրա կառավարման, ռազմա-ծովագին ծառայություն կատարելու համար հարկավոր են տեխնիկական հատուկ գիտելիքներ ունեցող մարդիկ:

Ամենաբարդ մեխանիզմ ունեցող ժամանակակից նավերն իրենց սպասարկման համար հարցուրավոր մասնագետներ են պահանջում: Այդ մասնագետների նախապատրաստման համար Կարմիր բանակը համապատասխան դպրոցներ ունի:

Կարմիր բանակի յուրաքանչյուր նորակոչիկ նախքան մասնագետների դպրոցներ մտնելը յերեք տարիս ծառայում եւ վարժուցներում (եկլիպաժ) - ծովագին զորանոցներում, վորտեղ ծանոթանում եւ զինվորական ծառայության և կարգապահության հիմունքներին, ռազմական կարգին, հրացանին և ռազմա-ծովագին կամունադրություններին: Առանց

այդ տաճենը գիտենալու չի կարող լավ ծովառագմիկ լինել, վորը պետք է պատրաստ լինի թըշնամու գենահակածաքի վրա գործելու: Անգրագետ ծովագմիկը վարժոցներում վերացնում է իր անգրագիտառությունը, վորպեսզի հնարավորություն ունենա հաջող յուրացնելու հատուկ գիտելիքները, վոր նրանց ավանդում են ուսուցման հետագա աստիճանում՝ վոչ հրամկազմի մասնագետների դպրոցներում:

Յերիտասարդ ծովագինները վարժոցից բաժանվում են մասնագետների հպարոցներին, վորտեղ և ծովալին մասնագիտություն են ստանում: Մերենագիտական դպրոցում նավալին շարժիչների ու կաթսաների շարքալին մասնագետներ, ինչպես և փականագործներ են պատրաստվում: Հըստանական դպրոցը շարքալին հրետավորներ եւ պատրաստում: Ելեկտրո-ականային դպրոցից յելնում են ելեկտրագետներ, մոնտորներ, ուժա-մեքենայի մասնագետներ, լուսավորության գործիքներ ու թելեր սարքողներ, նույնպես և ականագործներ՝ ականի մասնագետներ: Այդ դպրոցի ուղիո-հեռագրալին բաժանմունքը ուղիո-հեռագրող մասնագետներ եւ տալիս: Զրասուզական դպրոցը տալիս է ջրասուզակներ, նավի ստործրյա մասերի նորոգության, ընդջրյա ասարկաներ հետախուզող մասնագետներ, և այնու ընդ-

ջրյա լողի զպըոցը պատրաստում և ստեղնա-
վերի անձնական կտղմը: Նեկավորների ու նշա-
նարարների գպըոցից յեխում են դեկափորներ՝
զեկի գործիքներն սպասարկող մասնագետներ և
նշանարարներ՝ լավտերներով, գրոշակներով և
այլ հարմարանքներով նշաններ տալու մասնա-
գեռներ, վոր անհրաժեշտ և նավերի միջև կապ
ապահովելու համար: Նավերի դիվաններում աշ-
խատելու համար հարկավոր են գրագիրներ, իսկ
նավային բարդ տնտեսությունը կարգին պահելու
համար՝ մասնագետ հոռոգոններ (տնտեսներ):
Այդ մասնագետներին պատրաստողը գրագիրների
յեւ հոռոգոնների գպըոցն է:

Դպրոցներին կից արհեստանոցներ կան, վոր-
տեղ ստացված զիտելիքները գործնականորեն
ամրացվում են: Ամառները պարապմունքները
լինում են նավերի վրա, լողալու ժամանակ,
վորտեղ աշակերտները ծանոթանում են նույն-
պես ծովային ծառայության: Հիշյալ դպրոցնե-
րում վոչ միայն մասնագիտական, այլ և քաղա-
քական, ինչպես նաև միքանի հանրակրթական
առարկաներ՝ ոռուսաց լեզու, մաթեմատիկա և
աշխարհագրություն են անցնում:

Դպրոցների ուսուցման ժամանակամիջոցը մի
տարի յեւ, վորձառական լողն ել հաշված: Աշա-
կերտներից ավելի ընդունակներն ու հաջողակ-

ներն այդ ժամկետը լրանալուց հետո փոխադրս-
վում են համապատասխան դպրոցների ավագ-
ների փոխերը, վորտեղից արդեն կրտսեր հրամ-
կագմի մասնագետ ավագներն են դուրս գալիս:

Մասնագիտական դպրոցներն ավարտած ծո-
վառազմիկները բաշխվում են նավերին, վորտեղ
մոտ յերեք տարի ծովային ծառայություն են
տանում: Նարքային ծովառազմիկի ծառայության
ընդհանուր ժամանակամիջոցը 4 տարի յեւ:

Վորպեսդի շարքային ծովառազմիկներից լավ
զրագետները հնարավորություն ունենան կար-
միր հրամանատար զառնալու, նրանց համար
կազմակերպվում են բարձրացրած տիպի յերե-
կոյան դպրոցներ, վորտեղ նրանք ուսուցման
յերկու տարվա ընթացքում ստանում են հանրա-
կրթական գիտելիքներ, վոր նրանց հնարավո-
րություն են տալիս կարմիր նավատորմի հրա-
մանատարական կազմի դպրոցները մտնելու:
Նավատորմի հրամկազմի դպրոցների ունկնդիր-
ների պատրաստման դերը կատարում են նաև
Ռազմա-ծովային դպրոցի ընդհանուր դասընթաց-
ները, վորտեղ ընդունվում են 15—17 տարեկան
կոմիտեիտականներ և ծովառազմիկների յերեխա-
ներ: Ուսուցման ժամանակամիջոցը յերեք տարի
յեւ: Դպրոցում անցնում են հանրակրթական ա-
ռարկաներ, ինչպես և ուսուցմա-ծովային ծառա-

լության հիմունքները (ամառավին նավագնացության ժամանակ):

Կարմիր նավատորմի հրամանատարական կազմը պատրաստվում է հատուկ դպրոցներում: Ռազմա-ծովային Դպրոցը պատրաստում է շարքային հրամանատարներ, պահապետներ: Ուսման ժամանակամիջոցը լեռեքամյա է: Ռազմա-ծովային ծարտարագիտական (ինժեներական) Դպրոցը տալիս է շարժիչների, նավակառուցման մասնագետ-ճարտարագետներ (ինժեներներ): Ուսուցման ժամանակամիջոցը մոտ չորս տարի է: Ռազմա-Ծովային ջրագրական Դպրոցը պատրաստում է ջրագիրներ՝ ծովերը հետախուզող, ամենակարճ և ամենից ավելի հարմար ու անվտանգ ծովային ճանագարներ ուսումնասիրող, վտանգները հետաքննող մասնագետներ և ազն: Ուսուցման ժամանակամիջոցը լեռեք տարի է:

Ռազմա-Ծովային ծեմարանը Կարմիր նավատորմի հրամանատարական կազմին հնարագործություն է տալիս մասնագիտական բարձրագույն կրթություն ստանալու:

Կարմիր նավատորմի քաղաքական կազմը պատրաստվում է Ռազմա-ծովային Քաղաքական Դպրոցում:

Դպրոցների և ձեմարանի ունկնդիրներն ամառնանց են կացնում նավագնացությամբ:

Անձնական կազմի պատրաստությունը Կարմիր նավատորմի համար հսկայական նշանակություն ունի: Մարտի արդյունքը վոչ թե մեռած մեխանիզմներից ու հրանոթներից, այլ նրանց կառավարող մարդկանցից եւ կախված: «Վոչ թե նավերը, այլ նրանց վրա գտնվող մարդիկ են կըռվում, Վոչ թե թնդանոթներն են կրակում, այլ նրանցով մարդիկ են կրակում»:

*

Խորհրդացին իշխանության ամբողջ ջանքն այն բանին է ուղղած, վոր Կարմիր նավատորմը լցված լինի ընտիր, գլխավորապես բանվորական անձնական կազմով, վորը պարզ հասկանար իր դասակարգացին շահերը, կարողանար թշնամուն հակագրել իր պրոլետարական միաձուլությունը, կազմակերպվածությունը, գիտակցականությունը և կորովը: Նավատորմն ընտրովի պրոլետարական լերիտասարդությունով և հատկապես բանվոր լերիտասարդության առաջամարտիկ կոմիերիտականներով անընդհատ լրացնելը լավագույն կերպով լուծում է այդ խնդիրը և ապահովում է հզոր, մարտունակ Կարմիր նավատորմ ստեղծելու գործը:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱՐՄԻՐ ՆԱՎԱՏՈՐՄՈՒՄ.

Կարմիր-տորմիղալինների քաղաքական դարձացման և նրանցից բանվորա-գյուղացիական պետութիւն առաջ դրված ինդիբները հասկացող և նրա պաշտպանութիւն ու բոլոր լերկըների բանվոր դասակարգի գործի համար կուրծքը դեմ տալու պատրաստ գիտակից քաղաքացի մարտիկներ կրթելու համար Կարմիր նախատորմում կոմմունիստական կուսակցութիւնն զեկավարութիւնը քաղաքական և լուսավորչական մեծ աշխատանք և կատարվում:

Կարմիր նախատորմում քաղաքական աշխատանքի պարտագիր և վոչ պարտագիր ճյուղեր գոյութիւն ունեն:

Կարմիր նախատորմի պարտադիր քաղաշխատանքի գլխավոր տեսակներից մեկը այսպես կոչված «քաղղղաղմունքներն» են:

Քաղղղաղմունքներն իրենց բնույթով բաժանվում են քաղժամերի և առժամերի:

Հաղթամներին լուսաբանվում են զուտ քաղաքական հարցեր՝ Խորհրդային իշխանութիւնն եղությունն ու ինդիբները, բանվորա-գյուղացիական պետութիւն կառուցվածքը, Կարմիր բանակի և նախատորմի պատմությունը, քաղաքացիական կովի պատմությունը, միջազգային հեղափոխական շարժումը, կասիտալիստական կարեսը գույն լերկըների և, առաջին հերթին, մեր հարեանների տնտեսական և քաղաքական կացությունը. պատկերացում ե տրվում մեր դարաշրջանի իմպերիալիստական բնույթի մասին, քննվում են Կարմիր նախատորմի շինարարութիւնն հարցերը, նրա հերթական ինդիբները, նրա պատմությունը, ուրիշ լերկըների նախատորմերի կացությունը և այլն:

Քաղղղաղմունքների միջոցով տրվում են նույն պես անհրաժեշտ տեղեկություններ մայրենի լեզվի, մաթեմատիկայի և աշխարհագրութիւնն բնագավառից և անգրագիտության ու թերի գրագիտության վերացումն ե իրականացվում, ըստվորում անգրագիտությունը վերացվում և նաև նորակոչիկների վարժուցներում զանված միջոցին, մինչև մասնագետների դպրոցներին բաշխվելը:

Առժամարի նպատակն ե Կարմիր նախատորմի ծովամարտիկներին տարբական տեղեկություններ տալ մարմի հոգատարութիւնն մասին և

նրանց մեջ առողջապահական ունակություններ կըթել:

Քաղզբաղմունքները տարվում են խստորոշված որերին և ժամերին հատկապես դրա համար զատկած դեկավարների՝ վաշտային քաղղեկների ձեռքով:

Ամենից ավելի գիտակից կարմիր-տորմիղալինների միջից քաղղեկներին ոգնական են տրվում քաղավագներ (խմբավարներ), յուրաքանչյուր վաշտին 3—5 հոգի: Բացի այդ, կարմիր-տորմիղալինների հետ քաղզբաղմունքներ ունենալու համար գործի լեն կանչվում նաև հրամանատարական և բժշկական կազմերը:

Կարմիր նախատորմում կան յերեք աստիճանի կոմիերիտական և կուսակցական քաղաքական դպրոցներ:

Այդ դպրոցների աշխատանքի գլխավոր բովանդակությունը ԽՍՀՄ հեղափոխական շարժման պատմության ուսումնասիրությունը և կուսակցական ու խորհրդային շինարարության հարցերի խորազննին մշակումն եւ:

Այդ դպրոցները հաճախելը պարտադիր և միայն կոմմունիստների և կոմիերիտականների համար, բայց մուտքը լայն բաց և նաև բոլոր անկուսակցական կարմիր-տորմիղալինների առաջ, կարմիր տորմիղի զանազանատիպ դպրոցների թիվը յերեք-հարյուրի լե հասնում:

Պարտագիլը քաղաշխատանքներից զամա, վոր պաշտոնական ժամերին և կատարվում, կարմիր նախատորմում պաշտոնից դուրս (կամ, այլ կերպ ասած՝ արտադպրոցական) մեծ քաղաքական աշխատանք և կատարվում: Այդ աշխատանքին մասնակցություն ունենալը պարտադիր չե ծովամարտիկների համար: Այդ ամբողջ աշխատանքը կազմակերպվում և այնպես, վոր շահագրգուե, դեպի ինքը ձգե կարմիր-տորմիղալիններին, վորոնք դրանով վարժվում են խելացի հանգստի և գիտակից քաղաքացուն արժանավայել ժամանցի:

Արտապաշտոն քաղաքական աշխատանքն իր ձևերով բաժանվում և նախնական և մասսայական աշխատանքի:

Արտադպրոցական նախնական աշխատանքը գլխավորապես նավերի վրա և զորամասերում և կատարվում: Ավելի գործոն կարմիր-տորմիղալիններն իրենց հակումների ու հետաքըրքության համեմատ ինքնագործ խմբակներ (կամ միջուկներ) են կազմում: Կան նկարիչների, յերաժիշտների, յերգիչների, ֆիզկուլտուրականների, ընթերցաներների, շախմատիստների, ռադիո-սիրողների, պատի ու ընդհանուր-տորմիղալին թերթերի թղթակիցների, անաստվածների, գրքի բարեկամների, ինչպես նաև առանձին հարցերի՝ հարկալին, արտաքին քաղաքականության, տար-

բեր յերկրների կացութիւնն ուսումնասիրութիւնն
խմբակներ և այն:

Ազդպիսի յուրաքանչյուր խմբակի անդամների
թիվը 3-ից մինչև 20 և լինում:

Ազդ ամբողջ ակտիվը խմբվում և նավի կամ
գորամասի լենինյան անկան շուրջը, վորի հա-
մար նավի վրա հատուկ տեղ և հատկացվում:
Լենինյան անկյունն ամառն իր գործունեյությու-
նը սովորաբար բացոթյա յե ծավալում՝ վերին
տախտակամածի վրա, իսկ ձմեռը՝ զորախմբին
հատկացված շենքերի մեջ՝ իր իսկ լենինյան
անկյան շենքում:

Գրեթե բոլոր նավերի վրա և զորամասերում
գոյություն ունեն զրադարան-ընթերցարանները,
վոր սովորաբար լենինյան անկյուններին կից
են լինում, կարմիր-տորմիդալիններին արամա-
գրում են գրքեր, որաթերթեր և ամսագրեր. Կար-
միր նավատորմը 150-ից ավելի անկյուն և 215
գրադարան ունի:

Ակտիվստների հիշալ խմբակները վոչ միայն
իրենց շրջանում են աշխատանք կատարում,
այլև հանդես են գալիս ամբողջ զորախմբի
առաջ, կազմակերպելով փոքրիկ ներկայացում-
ներ, յերաժշտական յեվ իմբական յելույթներ,
հարց ու պատասխանի ժամեր ու յերեկոներ,
քարձրածայն ընթերցումներ:

Մասսայական կրթական աշխատանքը սովորա-
բար կատարվում է ուսումնակային ակումբնե-
րում և կայսանում և նրանում, վոր կազմակերպ-
վում են գիտական, քաղաքական և ուսումնա-ծո-
վալին թեմայով հանրամատչելլ դասախոսություն-
ներ, քանակոր ու լուսեղեն (սветовые) թերթեր,
կինոսեանսներ, ներկայացումներ, համերգներ,
սպորտի յերեկոներ, ամենատեսակ ցուցահանդես-
ներ, շախմատի յեվ այլ տեսակի խմբախաղեր
և այն: Կարմիր նավատորմի ակումբների թիվը
22 է:

Ակումբներին կից կազմակերպվում են զանա-
զան տեսակի խմբակներ՝ դրամատիկական, հան-
րակրթական, ուսումնակային, գեղարվեստական,
շախմատի, քաղաքական և այն: Խմբակներն
ամենագործոն մասնակցություն ունեն ակումբ-
ների վողջ աշխատանքի մեջ. Կարմիր նավատոր-
մում յեղած խմբակների թիվը յերեքհարյուրից
ավելի յեվ:

Նավատորմի ամբողջ արտապաշտոն քաղաքա-
կան աշխատանքի կազմակերպության համար
կան՝ ակմբազետեր, խմբակների ղեկավարներ,
գրադարանապետեր, լենինյան անկյունների վա-
րիչներ յեվ այլն:

Կարմիր նավատորմի գրեթե բոլոր նավերի ու
զորամասերի մեջ կան կոմմոնիստական կոսա-

կցության բջիջներ, վորոնք զբաղվում են իրենց անդամներին հեղափոխական կոմմունիստական վոգով դաստիարակելով։ Կուսակցական բջիջները կարմիր նավատորմի կազմակերպիչ հիմնական միջուկն են։ Նրանք են ուղղություն տալիս ամբողջ կյանքին ու շինարարությանը։ Բջիջներին կից կոմիերիտականներից կազմակերպվում են Համ. Կ. Կ. (ը) ոժանդակող կոմիերիտական խըմբակներ։ Կոմբջիջները և ոժանդակող խմբակները հատկապես գործոն մասնակցում են Կարմիր նավատորմում տարվող քաղաքական ամբողջ աշխատանքին և նրա վոգի ներշնչողները, ղեկավարները և կազմակերպիչներն են։

Գրեթե բոլոր նավերի բջիջներն ու ոժանդակող կոմիերիտական խմբակները պատի թերթեր են հրատարակում, վորոնք սովորաբար ամիսը յերկու անգամ են լույս տեսնում։ Պատերի թերթերին լայնորեն մասնակցելու լեն զրավում անկուսակցական ծովամարտիկները։ Հարկավոր են ուշնպես հիշատակել Կարմիր նավատորմում հրատարակող կենդանի լրագրերը, վորոնց ծրագրերը կազմում ու կատարում են իրենք ծովամարտիկները։

Կարմիր նավատորմում յերկու որաթերթ են լույս տեսնում՝ «Կрасный Балтийский Флот» (Լենինգրադ, Շովակալություն) և «Կрасный Черно-

մօրեա» (Սևաստոպոլ, Լենինի փողոց)։ Մովամարտիկներն ամենագործոն մասնակցություն ունեն իրենց թերթերին։ Ներկայումս նավատորմն այդ թերթերին աշխատակցող 500. ից ավելի թղթակիցներ (ծովագործակից) ունի։ Ուստի և զարմանալի չե, վոր թերթերի և կարմիր-տորմիղային միջև ամենասերտ կապ ե հաստատվել։ Կարմիր-տորմիղային թերթերը կարմիր նավատորմի շինարարությունը, կյանքն ու կենցաղը, նրա բոլոր ուրախություններն ու վշտերն արտացոլող իսկական հայելին են։

Աշխատանքի այն տեսակներից զատ, վորոնց մասին խոսվեց վերև, նավերն ու զորամասերը կազմակերպում են նաև զորախմբերի ընդհանուր ժողովներ։ Ընդհանուր ժողովներում են զորախմբերի՝ բանվորական ու զուղալսվում անկուսակցական ծովամարտիկների Խորհուրդների մեջ ցիական պատգամավորների Խորհուրդների գեկուցումները, ունեցած ներկայացուցիչների գեկուցումները, ընտրվում են Խորհուրդների պատգամավորները, ըննվում են ԽՍՀՄ ներքին ու միջազգային դրուքների հարցերը, լուծվում են զորախմբի կոռպենդիան հարցերը, զանազան ինքնագործ կազրացման հարցերը, զանազան ինքնագործ կազմակերպությունների կազմակերպման և աշխատանքի հարցերը, լսվում են նավերի հրամանաւարության տեղեկագրությունները և այլն։ Ամբողջ քաղաքական, լուսավորչական և կու-

սակցական աշխատանքը ղեկավարելու համար կարմիր նավատորմի նավերի ու զորամասերի համար նշանակվում են զինվորական կոմիսարներ, վորոնց ամսմիջականորեն յենթարկված են նավի կամ զորամասի ամբողջ քաղաքական ապարատը:

Բայց քաղաշխատանքի ղեկավարությունից և նրա համար պատասխանատու լինելուց զատ, զինվորական կոմիսսարները, ինչպես և հրամանատարները, դիտում և պատասխանատու յեն կարմիր-տորմիղացինների ուսուցման ու մարտական պատրաստության բոլոր կողմերի, զբաղմունքների կանոնավոր ընթացքի համար:

Անա թե ինչու կոմիսսարների պաշտոնների համար ընդհանրապես նշանակվում են կոմմունիստներից առավելապես կայուններն ու տոկունները, վորոնք դործնական աշխատանքի բավականաչափ փորձ ունեն:

Կապիտալիստական լերկոների զինված ուժերը հիմնվում են զինվորականների կողմից կալվածատերերի ու կապիտալիստների վորդիներից յելած իրենց պետերին սարկորեն հպատակվելու վրա, զինվորների ու նավաստինների ագիտության, ծեծկվածության ու խավարամքության վրա: Կարմիր բանակն ու Կարմիր նավատորմն, իրենց իսկ աշխատավորների զինված ուժ,

ընդհակառակը, խորապես շահագրգոված էն, վորպեսզի զինվորական ծառայության կանչված բանվորների ու զուղացիների քաղաքական ու քաղաքակըթական մակարդակը բարձրացվի: Կարմիր բանակն ու նավատորմը սաղմական ու քաղաքական մի դպրոց են, վոր վոչ միայն մարտիկներ են պատրաստում, այլև գիտակից քաղաքացիները, վորոնք ընդունակ են ամենալեռնդուն մասնակցություն ունենալու բանվորների ու գուղացիների՝ աշխարհում առաջինը հանդիսացող՝ պետության շինարարության մեջ:

Կարմիր բանակն ու Կարմիր նավատորմը հաղթահարել և հաղթահարում են իրենց առաջարկած լինդիրները միմիայն այն պատճառով, վըրված կոմունիստական կուսակցության կողմից վոր կոմմունիստական կուսակցության կայուն ու նրանց մեջ տարվող աշխատանքը. կայուն ու գիտակից մարտիկներ ե դաստիարակել, վորոնք աշխատավորների թշնամիների դեմ մղած մարտերում քաջության հրաշքներ են գործել:

Ուստի և քաղաքական-լուսավորչական աշխատանքի ծավալումը Կարմիր նավատորմի առաջատական դաշտերում կարմիր նավատորմից մեկն ե: Նրա դրված կարևորագույն խնդիրներից մեկն ե: Նրա հետագա ամրացումն ու զարգացումը ԽՍՀՄ հետագա անվտանգության ու գուղացիների խաղաղ աշխատանքների ու գուղացիների լավագույն գրագականն ե:

սակցական աշխատանքը ղեկավարելու համար կարմիր նավատորմի նավերի ու զորամասերի համար նշանակվում են զինվորական կոմիսարներ, վորոնց անմիջականորեն յենթարկված և նաև կամ զորամասի ամբողջ քաղաքական ապարատը:

Բայց քաղաշխատանքի ղեկավարությունից և նրա համար պատասխանատու լինելուց զատ, զինվորական կոմիսարները, ինչպես և հրամանատարները, դիտում և պատասխանատու յեն կարմիր-տորմիղավիճակների ուսուցման ու մարտական պատրաստության բոլոր կողմերի, զբաղմունքների կանոնավոր ընթացքի համար:

Ահա թե ինչու կոմիսարների պաշտոնների համար ընդհանրապես նշանակվում են կոմմունիստներից առավելապես կայուններն ու տոկունները, վորոնք դործնական աշխատանքի բարգականաչափ փորձ ունեն:

Կապիտալիստական լերկրների զինված ուժերը հիմնվում են զինվորականների կողմից կալվածատերերի ու կապիտալիստների վորդիներից լելած իրենց պետերին ստրկորեն հալատակվելով, զինվորների ու նավաստիների ագիտության, ծեծկվածության ու խավարամ+ության վրա: Կարմիր բանակն ու կարմիր նավատորմն, իրքն իրենց իսկ աշխատավորների զինված ուժ,

ընդհակառակը, խորապես շահագրգռված են, վորպեսզի զինվորական ծառայության կանչվածքանվորների ու զյուղացիների քաղաքական ու քաղաքակրթական մակարդակը բարձրացվի: Կարմիր բանակն ու նավատորմը ուղղմական ու քաղաքական մի դպրոց են, վոր վոչ միայն մարտիկներ են պատրաստում, այլև գիտակից քաղաքացիներ, վորոնք ընդունակ են ամենայեռանդուն մասնակցություն ունենալու բանվորների ու գյուղացիների՝ աշխարհում առաջնը հանդիսացող՝ պետության շինարարության մեջ:

Կարմիր բանակն ու կարմիր նավատորմը հաղթահարել և հաղթահարում են իրենց առաջտըրված խնդիրները միմիայն այն պատճառով, վոր կոմմունիստական կուսակցության կողմից նրանց մեջ տարվող աշխատանքը կայուն ու գիտակից մարտիկներ ե դաստիարակելու վորոնք աշխատավորների թշնամիների դեմ մղած մարտերում քաջության հրաշքներ են գործել:

Ուստի և քաղաքական-լուսավորչական աշխատանքի ծավալումը կարմիր նավատորմի առաջդրված կարևորագույն խնդիրներից մեկն ե: Նրա հետագա ամրացումն ու զարգացումը ԽՍՀՄ կառագա անվագության ու գյուղացիների խաղաղ աշխատավորների ու գյուղացիների անվագության լավագույն գրավականն ե:

ՆԱՎԱՏՈՐՄԸ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԵԶ.

Նավատորմն իր տեխնիկական կազմակերպության բարդության շնորհիվ բուրժուական պետությունների մեջ ել լրացգում և գլխավորապես բանվոր լերիտասարդությունից, վոր արդեն տեխնիկական հմտություններ ունի և ավելի մեծ ճարտարություն և ուշիմություն, քան զյուղացի լերիտասարդությունը։ Հենց միայն ծովածարտիկների այդ պրոլետարական կազմ ունենաւ լու փաստը նավատորմին պատվավոր տեղ և ապահովում հեղափոխական շարժման մեջ։

Սակայն նավատորմն ինքնին ծովածարտիկներին հեղափոխական վոգով և կրթում։ ԶԵ վոր ամեն մի նավ այլ բան չե, քան հսկայական լողացող մի ֆաբրիկա՝ հարյուրավոր մեխանիզմներով, ամենաբարդ գործիքներով, մեքենաներով ու պարագաներով։ Իսկ կապիտալիստական մեքենային խոշոր արտադրության գործարաններին մթնոլորտում կատարած աշխատանքը հեղա-

փոխական վոգի յե ծնում. այդ այժմ մեզանում, խորհրդային լերկրում, լերկար բացատրելու կարիք չկա։

Նավը մշտապես պայքարի մեջ և ծովի զորավոր տարերքի հետ։ Նրա զորախումբն այդ տարերքն իրեն հնազանդեցնելու համար պիտի այնպես կոփե իր կամքը, իր մեջ այնպիսի համառություն և հաստատակամություն մշակե, վոր նավը շրջապատող բազմաթիվ վաշնգների ըոսկեցին շշփոթվի, չլքվի, ամուր կանգնի իր պահատեղում։

Մի ծովածարտիկի սխալը կորուստ և սպառնում ամբողջ նավին և կարող է նրա ամբողջ զորախմբի կյանքն արժենալ, Նավի վրա մեկը սմենքը և ամենքը մեկի համար պետք է լինեն։ Կամքը, լեռանդը, իր նպատակին հասնելու համառությունը, համերաշխության, միաձուլության և ընկերության զգացմունքներն ամենից ավելի շատ ծովալին գժվարին ծառալության պայմաններում են կոփիվում։

Ռազմանավերի զորախմբերը լինում են արտասահմանում, հնարավորություն են ունենում ուրիշ պետություններում գոյություն ունեցող կարգերը մոտիկից գետելու, Ռւսափի և իրենց ուստար կարգերի համեմատությունից նրանց աշքին ավելի շուտ կղարնեն իրենց հայրենիքի քա-

ղաքական կառուցվածքի առավելություններն ու թերությունները։ Այսպիսով՝ ուրիշ չերկրներ այցելելը զգալիորեն ընդլանում է ծովամարտիկների աշխարհայացքը և բարձրացնում նրանց ընդհանուր գիտակցականությունն ու զարգացումը։

Իսկ բոլոր կասխտալիստական պետությունների ռազմական նավատորմերում սահմանած դաժան, իսկական տաժանակիր կարդապահությունը, վոր գազանային խստությամբ ճզմում է նավաստիների զգացմունքների և մտքերի ամեն մի ազատ արտահայտություն, նրանց մեջ զայրությի ու ըմբռստացման զորավոր վոզի յե հարուցանում իրենց տմարդի հարստահարիչների դեմ։

Ահա թե ինչու ռազմական նավատորմը միշտ գտնվել և գտնվում է հեղափոխական շարժման առաջապահում։

Յեկ ցարական Ռուսաստանում նավատորմի հեղափոխական շարժումը միշտ ամենասերտ կապ է ունեցել ամբողջ չերկրի հեղափոխական շարժման հետ։

Արդեն 100 տարի առաջ, գեղաբրիստների 1825 թվ. ապստամբության ժամանակ, նրանց շարքերում առանձին հեղափոխական-ծովամարտիկներ կալին։

Յերբ անցյալ դարի յերկրորդ կեսին «Նարոդ-

նիկների» շարժումը զարգացավ, մենք նրանց թվում արդեն տասնյակներով հեղափոխական-նավաստիներ ենք հաշվում։

Անցյալ դարի վերջերին, Ռուսաստանում կապիտալիզմի աճման ու զարգացման հետ մեկտեղ աճում ու զարգանում եր կապիտալիզմի անխուսափելի ուղեկիցը, նրա գերեզմանափոր բանվոր գասակարգը։ Իսկ պրոլետարիատի աճումն առաջ եր բերում նրա գիտակցականության, կազմակերպվածության աճումը, պրոլետարական հեղափոխական շարժման աճումը։

Յեկ Փաբրիկա-գործարանային բանվորների հեղափոխական շարժման աճման հետ համաքայլայնանում ու զարգանում եր ցարական նավատորմի հեղափոխական շարժումը։

Տվյալներ են պահպանվել, վորոնք խոսում են այն մասին, թե դեռևս մեր դարի առաջին տարիներին ռազմա-ծովային հեղափոխական խմբակներ, կազմակերպություններ, ժողովներ են յեղել,

Յեկ յերբ ցարիզմի՝ Յապոնիայի դեմ մզած անհաջող պատերազմից հետո Ռուսաստանում հեղափոխական շարժումը մասսայականացավ և տարածվեց ամբողջ յերկրով մեկ, ռազմական նավատորմի մեջ ել շարժման բուռն աճում եր կատարվում։

Ցարական նավատորմի ծովամարտիկները 1905

թվականի հեղափոխական շարժման պատմության
մեջ փառավոր եցեր զբեցին:

Արդեն 1904 թ. վերջերին Սև-ծովան նավա-
տորմում կազմակերպվեց նավաստիների կեն-
տրոնական կոմիտե, վորի մեջ մտնում ելին բո-
լոր նավերի հեղափոխական կազմակերպություն-
ների ներկայացուցիչները։ Այդ կոմիտեի գաղտ-
նի նիստերում ընդունված բանաձեռին հարցու-
րավոր ծովամարտիկներ ելին միանուն:

1905 թվականի սկզբին հեղափոխական մթնո-
լուրաը ծալքագույն լարման հասավ։ Ապստամբու-
թյունն որ-ավուր հասունանում եր:

Ապստամբությունը ըսնկեց 1905 թ. հունի-
ւի 27-ին պատահական մի առիթով (գորախմբի
ճաշի մեջ վարդնած միս լինելուց) Սև-ծովան
նավատորմի ամենահզոր զրահակրի՝ «Իշխան
Պատյումկին Տավրիչեսկու» վրա:

«Պատյումկինը» տասնմեկ որ հեղափոխական-
ների ձեռքին եր գտնվում։ Նա հեղափոխության
կարմիր զրոյով հածանավում եր Սև ծովի վրա։
Նրա գեմ ուղարկված նավախումբը սիրտ չեր
անում մարտի ըսնկել հետք։ Դեռ ավելին.
նավախմբի խոշոր նավերից մեկը՝ «Գեորգի»
Պաբեգանսեցը» նրա կողմն անցավ։

Սակայն ածիսի և կենսամթերքի պաշարներն
սպառվեցին։ Զհաջողվեց նոր պաշար ստանալ:

Սև-ծովան նավատորմի մնացած նավերը «Պա-
տյումկինին» նեցուկ չեղան։ «Գեորգի» Պաբեգա-
նսեցը» նրան գավաճանեց։ Յեվ վոր ամենա-
դիմակորն ե, մեր կուսակցությունը չկարողացավ
շարժումն ամբողջությամբ իր ձեռքն առնել,
նրան ինքնավստահաթյունն, հաստատամտությունն
տալ, նրան պարզորոշ հեղափոխական նպատակ-
ներ առաջադրել:

Յեվ յերբ ընկ. Ռակովսկին, իբրև մեր կուսա-
կցության ներկայացուցիչ, յեկավ ոռոմինական
կոնստանցա նավահանդիսար հասած նավը, տե-
սավ, վոր այնտեղ տիրում ե հուսակըություն և
անվատահություն դեպի իրենց ուժերը։

Ծովամարտիկներն ստիպված յեղան թողնել
հեղափոխական զրահանտվը և Ռումինիայում ար-
գելափակել այն։

«Պատյումկինի» տասնմեկորյա ապստամբու-
թյունը ցնցեց ամբողջ աշխարհ։ «Կայսերական»
նավատորմի նավի կարմիր զրոշակը պայթած
ուռմբի ազդեցություն գործեց։

«Պատյումկինի» ապստամբությունը Ռուսաս-
տանի հեղափոխական շարժմանը հղոր զարկ
տվեց։ Այդ մասսայական առաջին ապստամբու-
թյունն եր ցարիզմի դեմ։ Յեվ այդ ե նրա պատ-
մական մեծ նշանակությունը։

Յերբ նույն 1905 թ. նոյեմբերին Սևաստոպո-

լում կրկին ծովամարտիկների ապստամբություն
սկսվեց, նրան գլուխ կանգնեց լեյտենանտ Շմիդ-
տը, վոր «Աչակով» հածանավից ազդանշան տվեց՝
«Յես եմ Սև-ծովյան նավատորմի հրամանատուն»:

«Աչակովին» միացան «Դնեստրը», «Ուրալեցը»
և միքանի ուրիշ նավեր, Սակայն նավերի մեծա-
մասնությունը չոգնեց աղստամբությանը: Նրան-
ցից և Սևաստոպոլի բերդի ծովափնյա մարտկոց-
ներից հեղափոխական նավերի վրա կը ակ բաց-
վեց: «Աչակով» ալրվեց: Ականակը վրա անցած
Շմիդտը կալանավորվեց: 1600-ից ավելի ապս-
տամբած ծովամարտիկներ անձնատուր լեղան:

Ապստամբությունը դաժանորեն ճնշվեց: Շմիդ-
տը և իր մերձավորագույն համախոհները գնդա-
կահարվեցին: Տասնյակ հեղափոխական-ծովա-
մարտիկներ բազմամյա բանտարկության, տա-
ժանակիր աշխատանքների և Սիբիրի կորստարեր
վայրեն աքսորվելու դատապարտվեցին:

Ցարիզմը պակաս դաժանությամբ հաշիվ շտե-
սավ Բալթիական նավատորմի ապստամբություն-
ների հետ՝ Կրոնշտադտում (1906 թ. ոգոստոսի
2-ին), Սվեաբորգում (1906 թ. ոգոստոսի 31-ին)
և «Պամյատ Ազովա» հածանավի վրա (1906 թ.
ոգոստոսի 1-ին):

Ռուսական առաջին հեղափոխության ջախջա-
խումը նավատորմում ևս շարժման ժամանակա-

վոր դադար առաջ բերեց: Բայց արդեն 1909
թվականին ցարական նավատորմում սկսում են
հեղափոխական խմբակներ առաջ գալ:

«Ճեսարևիչ», «Սլավայի», «Պավել Լի» և
«Բյուրիկի» ծովամարտիկների մի ամբողջ շարք
դատավարություններով հեղափոխական նավա-
տիների նոր տասնյակներ քշվեցին տաժանակիր
աշխատանքների և կալանավորական վաշտերը: Այդ
ժամանակամիջոցում շարժումն արդեն տարերա-
ցին չեր, այլ մեր բայց եկիկական կուսակցությունն
եր ղեկավարում այն:

1906-ից մինչև 1910 թ. կարճ ժամկետում
նավատորմի հեղափոխական շարժմանը մասնա-
կցեցին 4500 նավաստի:

Այդ նույն ժամանակամիջոցում մահվան դա-
տապարտվեցին 149 մարդ, տաժանակիր աշխա-
տանքների քշվեցին 960 մարդ, կալանավորական
վաշտերը՝ 1744 հոգի. բերդարգելվեցին 90-ը, կար-
գապահական գումարտակների հանձնվեցին 876
մարդ, բանտարկվեցին 356: Զանազան ուրիշ
պատիժներ կրեցին 229 մարդ: Չորս տարվա
կարճ ժամանակաշրջանում նավատորմն այսպիսի
մեծ զոհերով եր հատուցում ցարիզմի դեմ մղած
հեղափոխական պայքարին մասնակցելու համար:

Համաշխարհային պատերազմի ամենայեռուն
պահուն, 1915 թ. ամառը ապստամբություն

ծաղեց Բալթիական նավատորմի ռ Գանգուտաց
գծանավի վրա:

Բերդն ու տաժանակիր աշխատանքները չեղան
ապստամբների բաժինը...

1916 թվականին բայլշեփեկական կազմակեր-
պություն հայտնաբերվեց Բալթիական նավատոր-
մի «Յեսարկելչ», «Պետրովավլովսկ», «Պալաւ-
ավա», «Գանգուտ», «Ռասսիա», «Պավել I»,
«Ալեքսանդր II», «Վորիկ» և միքանի ուրիշնա-
վերի վրա:

Նորից դատեր, նորից տաժանակիր աշխա-
տանքներ...

1917 թվականի ապստամբության ժամանակ
կրոնշաղտոի ծովամարտիկները միանգամից բայլ-
շեփերին հետեւցին, կրոնշտագովիներն արգեն
ապրիլ ամսին լողունգ հոչակեցին՝ «Վողջ իշխա-
նությունը Խորհուրդներին», իսկ մայիսի վերջին
կրոնշտագութիւնը Խորհուրդն իրականացրեց այդ լո-
գունգը, իրեն կրոնշտագութիւնի միակ իշխանություն
հալտարարելով:

Ծովամարտիկներն այդ մոմենտից անհաշտ
կորիվ սկսեցին համաձայնողական ժամանակավոր
կառավարության դեմ և այդ կորիվը մղում ելին
բայլշեփեկան դրոշի տակ:

1917 թ. հուլիսան հայտնի որերին հեղափո-
խական ծովամարտիկները ժամանակավոր կա-

ռավարության դեմ տարերախնորեն սկսված շարժ-
ման գլուխն ելին անցած:

Հոկտեմբերյան մեծ հեղափոխության որերին
ծովամարտիկները վճռական դեր ելին խաղում:
Կերենսկու յերկշոտ կառավարության թագստա-
րանի՝ Զմեռալին պալատի վրա դրոհի զնացող
ջոկատները գլխավորապես ծովամարտիկներից
ելին կազմված: Հեղափոխական փառապանծ
«Ավրորա» հածանավը, վոր բայլշեփեկական կու-
սակցության կոչով Պիտեր եր յեկել, 1917 թ.
հոկտեմբերի լույս 25.ի (ն. ա. նոյեմբերի 7-ի)
դիշերը Զմեռալին պալատի վրա արշավող նա-
վաստիներին ոգնեց և իր հրանոթներով պալատը
ոմբակոծեց:

Հականեղափոխական ժամանակավոր կառա-
վարության վիճակն անդարձ վճռված եր Յեղ
այդ վճռի մեջ հեղափոխական ծովամարտիկները
պատվավոր դեր խաղացին:

Քաղաքացիական պատերազմի ժամանակ, վոր
իշխանությունն իրենց ձեռքն առած ոռւսական
բանվորներն ու զուղացիները 1918 - 1921 թ. թ.
մղում ելին գեներալների, Փարբիկանաների և
կալվածատերերի դեմ, ծովամարտիկներին նույն-
պես բացառիկ պատասխանատու ինդիրներ
վիճակվեցին:

Ծովամարտիկներն այն միջուկն ելին, վորից

հետագալում աճեց հզոր, անպարտելի կարմիր բանակը։ Հեղափոխական նավաստիներն առաջին շարքերում ելին կրասնովի, կալեդինի, Դուտովի, կարմիլովի, Դենիկինի, Կոլչակի, Յուդենիչի, Պետլուրայի, Վրանգելի և հակահեղափոխութիւն այլ պարագլուխների դեմ մղած մարտէրում։ Քաղաքացիական կռվի բոլոր ճակատներում նավաստիների հարվածային ջոկատներ ելին կազմը ված, վորոնք ան ու սարսափ ելին տարածում թշնամիների վրա։ Քաղաքացիական պատերազմի ժամանակ այնքան հակայական դեր խաղացած զրահագնացքները գլխավորապես ծովամարտիկներից ելին կազմված։

Ամենածանր պայմաններում, թշնամու անմիջական հարվածների տակ ծովամարտիկների ուժերով ելին կազմակերպված Վոլգայի, Կամայի, Դնեպրի, Հյուս. և Սրբամտ. Դվինաների, Անդրայի և Լաղոգա լճերի գետալին և լճալին ուղմական նավատորմիկները։

Բալթիկ ծովում անգլիական նավատորմի, Ազով և Սև ծովերում ոռոսական սպիտակ գվարդիականների նավատորմի դեմ մղած պակարը, Կասպից ծովում հակառակորդի նավատորմի ջախջախումն ու գերի վերցնելը – այս խնդիրների ամբողջ ծանրությունը նույնպես հեղափոխական ծովամարտիկների ուսերին ընկավ, և

նրանք ահծագույն դոհերի դնով հաղթահարեցին այն։

Կարմիր ծովամարտիկները հեղափոխության գրքի ամենագլութող՝ հաղիչ ու հերոսական գլուխներից մեկն են գրել Յել այդ նրանց պատմական մեծ ծառայությունն եւ կարմիր նավատորմը հպարտությամբ ե պահպանում հեղափոխական այդ փառավոր տրադիցիաները և իր ամբողջ աշխատանքով ջանում ե շարունակել այն։ Նրանց վոգով ե կրթվում նավատորմի լերիտասարդությունը, կովկելով և նախապատրաստելով իրեն կապիտալի դեմ մղելիք անխուսափելի մարտերի համար։

ԾՈՎԱՅԻՆ ՅԵՎ ՈԴԱՅԻՆ ՆԱՎԱ-
ՏՈՐՄԵՐԸ.

Վերջին տարիներս ավիացիան մեծ առաջա-
գիմություններ ե արել: 5000 - 7000 վերստանոց
թռիչքները սովորական յերեսութ են դառնում:
Սավառնակի թռիչքի արագությունը մեկ ժամում
սովորաբար 100 վերստից անցնում է: Ժամա-
նակակից ոդանավերն ընդունակ են, հարյուրավոր
փթերով բեռ և տասնյակներով մարզիկ վերցնել:
Այդ բոլորն արդեն անցած համաշխարհային պա-
տերազմի ժամանակ ողափին ուժերն առաջ քա-
շեց, իբրև ցամաքային և ծովային պատերազմի
ամենից ավելի զորավոր ոժանդակ միջոց: Պատե-
րազմից հետո ավիացիայի հետագա զարգացումը,
ոռումբեր ձգելու փորձերը և այլն - վոմանց ստի-
պեց այն մտքին հարել, թե ողանավատորմն
ընդունակ ե ծովայինին փոխարինել: Այս վաղա-
հաս դատողությունների մեջ առաջ են բերվում
հաշիվներ ծովայինի համեմատությամբ ողանա-
վատորմի համեմատական եժանության մասին,

ողանավատորմի մարտական հիանալի հատկու-
թյունների մասին, նրան խաղաղ նպատակների
համար ոգտագործելու մասին և ազն, և ազն:

Սակայն ուշադրությունից բոլորովին վրիպում
են մի շարք կարևոր մոմենաներ:

Ողափին առանձին միավորի մարտական նշա-
նակությունը ծովային առանձին մարտական միա-
վորի համեմատությամբ չնշին ե: Հակառակորդի
նավատորմը հաջողությամբ գնդակոծելու համար
ամբողջ տորմիկներ, ողափին ապահատների
մեծ թիվ ե պահանջվում: Շպրտվող ոռումբերի՝
շարժական նշանին դիպչելու տոկոսն աննշան ե:
Զափաղանց դժվար ե ծովային նավատորմի
բոնած փոքրիկ տարածության վրա գործող մե-
ծաքանակ ապահատների գործողությունների
համաձայնեցումը: Գիշերը, մառախուղը, վատ-
յեղանակն ավելի շատ անդրադառնում են ողա-
նավատորմի մարտունակության վրա, քան ծո-
վայինի: Ողափին նավատորմն ինքնին չի կարող
կատարել ծովային նավատորմի խնդիրները՝ ա-
կանափակոցներ վոչնչացնել, զորք ցամաք հանել
(ափնեջք հանել), իր գործող բանակին թիկունքի
հետ ծովային հաղորդակցություն ապահովել,
հրետանիով հակառակորդի բանակի ծովին հեն-
վող թերերը լետ մղել:

Նույնը վերաբերում ե նաև իր ծովեղերը հա-

կառակորդի նավատորմի զորավոր հրետանու կը ա-
կից պաշտպանելուն։ Միթե նման մի խնդիր
կարելի է բացառապես ոդային նավատորմին
հանձնարարել - իհարկե վոչ։ Հակառակորդի հար-
ձակվող նավատորմը ոդայինի հետ միատեղ կը-
գործի։ Իր ծովեղերքը պաշտպանող պետության
ոդանավատորմի գլխավոր խնդիրը նման դեպքում
սահմանափակվում է հակառակորդի ոդանավա-
տորմի հետ կովելով։ Իսկ հակառակորդի ծովա-
յին նավատորմի հրետանու դեմ կովելու համար
ամբողջ ծովափով մեկ զրահավոր զորավոր մարտ-
կոցներ շարելն անհմաստ ե. նրանց ծախսը ծո-
վային նավատորմի վրա կատարելիք նախսից
մեծապես կգերազանցի։ Յեվ հենց այդ դեպքում
ել հակառակորդի համար առանձնապես դժվար
չի լինի վորոշ կետի գեմ կենարոնացնել իր գե-
րազանց ուժերը և այստեղ գտնվող ծովափնյա
ամրությունները վոչնչացնել։ Իսկ յեթե մարտ-
կոցներ ծովափի միայն միքանի կետերում լինեն,
այդ դեպքում ափի մնացած ամբողջ տարածու-
թյան վրա հակառակորդը կարող է իր ծովային
ու ոդային նավատորմերի ծածկութիւն զորք
ափ հանել և ծովեղերը բռնել։ Ծովափի հաջող
պաշտպանության համար անհրաժեշտ են զորա-
շարժի հսարավորություն տվող ջրային աղատ
տարածության վրա տեղաշարժվող մարտկոցներ,

զորոնք կարողանալին հարկավոր ժամանակ և
հարկավոր տեղում անհրաժեշտ քանակով հայտ-
նըվել։ Իսկ այդ խնդիրը կարող են լուծել միայն
զորավոր հրետանիով զինված ուղմանավերը։

«Ծովալին կամ ոդային նավատորմ» - հարցն
այսպես դնել չի կարելի։ Խոսք կարող է լինել
ծովային և ոդային նավատորմերի միատեղի զոր-
ծողությունների մասին, սրանց փոխադարձ ոդ-
նության ու աջակցության մասին։ Բանակը պիտի
ապահովի ցամաքի վրա տիրապետելու գործը,
ծովային նավատորմը՝ ծովի վրա, ոդային նա-
վատորմ՝ ոդում։ Ընդուրում այդ յերեք ուժն
անպես պիտի զուգակցել վորպեսզի նրանք
իրենց միաձուլությամբ մարտական լավագույն
արդյունքներ տան։

Ասվածները բավական հեշտ ե հասկանալ ու
յաւրացնել, և ծովային նավատորմը ոդայինով
փոխարինելու տեսակետը կարճ ժամանակում
կորցը ել ե իր զրեթե բոլոր յեռանդուն կողմնա-
կիցներին։ Բայց այս բոլորը, հարկավ չի նշա-
նակում, թե ավիացիան վոչ մի դեր չի խաղում
ուղմածովային զործում։ Ընդհակառակը, ուղ-
մածովային տեխնիկալի այժմյան դրության պա-
հուն լիովին մարտունակ է միայն այն ծովային
նավատորմը, վորն իր արամագրության տակ
բարականաչափ ոդային ուժ ունի։

Ծովային ավիացիան ծովային զենքի առենա-
անհրաժեշտ աեսակներից մեկն և հանդիսանում:
Ծովային պատերազմը հակառակորդին վոչնչա-
ցնելու պատերազմ եւ: Այդ պատճառով ծովային
նավատորմի համար կարեոր ե, վոր հակառա-
կորդը նրա վրա անսպասելի չհարձակվի: Այդ
նպատակին հասնելու գլխավոր միջոցը հետա-
խուզության և դետքի լավ կազմակերպումն ե.
Մեծ արագություն ունեցող, շատ բարձրանալ
և ահագին տարածություններ դիտել կարողա-
ցող ոդային ապահարատը, հետևապես, կարող ե
անփոխարինելի ծառայություն մատուցել ծովա-
յին զինված ուժերին, դառնալով «նավատորմի
աչքը»: Պարզ ե, վոր հետախուզության ուղարկ-
ված նման սավառնակը կարող է հետամտել վոչ
միայն բաց ծովում գտնվող հակառակորդի նա-
վախումբը, այլև հայտնաբերել նրան այն տեղե-
րում, ուր նա խարսխվել է հանգստի և պաշար-
ներ լրացնելու համար - նավահանգստներում,
ուազմական նավակալաններում և այն:

Ավիացիան ահագին նշանակություն ունի
նաև ծովային պատերազմի անտեսանելի սոսկա-
լի գործիք սուզանավերի և փակոցի ականների
դեմ կովելու համար: Բանն այն ե, վոր միքանի
հարցուր մետք բարձրությունից լավ տեսանելի
լին դառնում ջրի տակ լեղած տուարկաները,

չերիք ե, վոր ծով լելած նավախումբը կամ
առանձին նավը բավականաչափ ոդային ուղե-
կիցներ ունենա, վորոնք թռչում են առաջից և
բարձրից դիտում ծովի խորքերը, - վորպեսզի
նավախմբերին հսկող սուզանավերի և փակոցի
ականների վտանգը նվազագույն դառնաւ: Ժա-
մանակին սուզանավ կամ ական հայտնաբերելը
գրեթե նույնն ե, ինչ վոր դրանցից ուազմական
նավը անվտանգ դարձնելը, վորովհետև այդպիսի
դեպքում ստորջրյա թշնամին զրկվում է իր
գլխավոր զենքից՝ անտեսանելի լինելուց: Նման
գլխավոր զենքից՝ անտեսանելի լինելուց:
Դեպքում մեծ ջանք պետք չե նախապատրաստ-
վել սուզանավի գրոհը լետ մղելու, նրա կողքով
անցնելու և կամ ականակին դաշտից հեռանալու
համար:

Բայց ծովային ավիացիակի խնդիրները գրանով
չեն սահմանափակվում: Սավառնակներին մեծ
ծանրություններ բարձրացնելու դրույթուն
տվող ժամանակակից մոտորների հզորությունը
հնարավորություն ե տալիս ոդային ապահար-
ներն ոգտագործելու իրքեւ օթոչող հրետանի»,
այսինքն հակառակորդի նավատորմի վրա ոռու-
թեր և ականներ ձգելու համար:

Ավիացիակի այդ ծառայության նշանակությու-
նը ահագին ե. հակառակորդի նավատորմի նա-
վերի վրա ոռումբեր հետելով կարելի լի մարտա-

կան մեծ արդյունքների համեմ, վորոնք ել ա-
վելի մեծանում են, յեթե հնարավոր ե լինում
թունավոր գագեր պարունակող քիմիական ռում-
բեր ձգել: Նույնիսկ յեթե զրանք չդիպչեն հա-
կառակօրդի՝ զրոնի յենթակա նավին, այլ միայն
մոտերքում պայթեն, — ելի ի վիճակի յեն նավի
վրա գոնվող ամեն մի կենդանություն թունա-
վորել և մահացնել: Իսկ վերեկց թողած տորպե-
դոն (Ուայտհեղի ինքնաշարժ ականը) ջրին հաս-
նելով՝ այնուհետեւ ինքն ե ուղղվում դեպի հա-
կառակօրդի նավը, պայթում ե նրա կողքին և
անոելի ավերածություններ պահանջում, վոր
հաճախ նավի կորսառով ե վերջանում:

Հակառավառնակալին թնդանոթներն այստեղ
գործին չեն ոգնում. չափազանց գժվար ե խփել
մեծ արագությամբ ողում ազատ շարժվող ոդա-
ցին թշնամուն: Այստեղ ելի ոգնության ե գալու
ծովալին ավիացիան, վոր բարձրանալով մեծ ա-
րագությամբ և զինված լինելով գնդացիրներով
ու թնդանոթներով, կարող ե նավատորմի վրա
զրոնի յեկող սավառնակի հետ ողում մարտի
րոնքել, գոնվելով նրանից վոչ պակաս նպաստա-
վոր պայմաններում: Հետևաբար, ծովալին նա-
վատորմը միայն ավիացիալի պաշտպանության
տակ կարող ե աներկուազ հանգստանալ իր բա-
զաներում, նորոգվել և ամեն տեսակի անհրա-
ժեշտ պիտույքների պաշար առնել:

Ծովալին ավիացիալի համար մարտական ծա-
ռայության ելի մի հակալական շրջան ե մնում.
այդ յերկու նավատորմի մարտին անմիջականո-
րեն մասնակցելուն ե: Զիսուելով արդեն հակառա-
կորդի նավատորմի վրա ուռմբեր և ականներ
ձգելու նրա ընդունակության մասին, նշենք, վոր
հնարավոր ե նրան ոգտագործել ծխածածկությ-
ուարքելու համար ջրի յերեսին լավ վառվող այն-
պիսի նյութեր ցած նետելով, վորոնք այրվելիս
ծխի հետ ամպեր են գուացնում և գրանով իրենց
նավատորմը հակառակորդից ծածկում են:

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր ծովալին
նավատորմում ավիացիան ոգտագործվում ե՝
1) իբրև հետախուզգ, վոր ոգնում ե հակառա-
կորդին ժամանակին հայտնաբերել, 2) իբրև
թշնամու նավատորմը վոչնչացնելու գործի ոգ-
նական, 3) իբրև պաշտպան ավելի ուժեղ թշնա-
մուց և, մասավանդ, իր բազայում հանգստացող
և նորոգվող նավատորմը ողից հարձակման յեն-
թարկելու դեմ:

Ինքնին հասկանալի յե, վոր ծովալին սավառ-
նակները ծովի պայմաններում մարտական ծա-
ռայություն անելու համար պիտի ջրում լողալու
հատկություն ել ունենան:

1911 թվականին հնարվեցին «թռչող նավակ-
ները»՝ ծովալին հատուկ սավառնակները — ջրա-

սավառնակները, վորոնք ջրից ոդում թռչելու և կրկին ջրի յերեսն իջնելու հասկությունն ունեն: Նրանց առանձնահատկություններն են.—զրվագաթերթից (Փաներա) կամ դուր-ալումինից (շատ թեթև և դիմացկուն մի մետաղ ե) թեթև սնամեջ նավակներ, վորոնց վրա սարքված են սավառնակի մյուս մասերը՝ թևերը, ղեկերը, մոտորները և պրոպելլերը: Զբասավառնումի զարգացմանը հատկապես արագացնող խթան յեղավ համաշխարհալին պատերազմի ժամանակաշրջանը: Ներկայումս զբասավառնակներն ընդունակ են շատ վեր բարձրանալ (10.000 մետր), ժամը մոտ 150 կիլոմետր արագությամբ շարժվել, իրենց հետ գնդացիրներ, թեթև թնդանոթներ, ծանր ուռմբեր վերցնել և ալին:

Ծովային ավիացիան իրեն առաջադրած խընդիրների համեմատ հետևյալ տեսակներին են բաժանվում.

Կործանիչներ. սրանց խնդիրն են մարտի բռնը-վել հակառակորդի ողային նավատորմի հետ: Սրանց բնորոշ առանձնահատկություններն են՝ հնար յեղածին չափ ուժեղ հրետանի, մեծագույն արագություն և թոփչքի բարձրություն, սակայն այրանութիւ աննշան (2–3 ժամի) պաշար: Զինված են գնդացիրներով, թեթև հրանոթներով:

Հետախույզներ. խնդիրն են դիտել հակառա-

գորգին, հաղանաբերել նրան և ծխածածկուլթ սարքել: Դրանք կործանիչներից ավելի ծանր են, և թոփչքի շրջանը մեծագույնն են: Զենքը—փոք-րիկ ուռմբեր:

Ոմբատարներ. նպատակներն են հակառակորդի նավերի և առափնյա շենքերի վրա ոռւմբեր նետել: Հետախույզներին ամենից ավելի մոտիկ տիպն ե, բայց լողի ավելի փոքր շրջան և առավելագույն քաշի ոռւմբեր ունեն:

Ծորպեղուկիրներ (ոդային ականակիրներ). դերն են բաց ծովում գրոհ տալ նավերի վրա և ստործըսա ականային փակոցներ սարքել: Զինված են սորպեղուներով (Ուաչահեղի ինքնաշարժ ականներով):

Ուղղիչներ (ձշտիչներ). նպատակն են իրենց նավերի և մարտկոցների՝ հեռավոր անտեսանելի նշանների վրա կրակելիս հրետանու հրաձգությունը ճշտել (ուղղություն տալ):

Ոժանդակ սավառնակներ. ծառայում են կապի և լրատարության համար:

Ծովային ավիացիային խարիսխ (ավաստաբան) ժառախել կարող են կամ ափին հատկապես սարքավորված ողանավարանները (խարսխային ավիացիա) և կամ ուղղմական նավատորմի նավերը (նավախմբային ավիացիա): Ծովային նավատորմն ունի ավիակիրներ (ավիա-մալբեր)՝ հատկապես սավառնակներ փոխադրելու համար շին-

ված նավեր: Ավիակիբները կարող են մինչև 50
սավառնակ ընդունել և նրանց վերելքի և եջքի
համար հատուկ տափարակներ ունեն: Ավիա-մայ-
րերում գտնվող նավախմբային ավիացիայի սա-
վառնակները նավախմբի ավիակիր մասն են
կազմում, վոր տարբերել պետք ե նավային» ա-
վիացիայից. վերջինս գտնվում է նավատորմի
մարտանավերի (գծանավերի, հածանավերի, ակա-
նակիբների և այլն) վրա:

* * *

Ծովային ավիացիայի ելությանը ծանոթա-
նալը պարզ պատկերացում ե տալիս, թե նա-
ինչքան կարեւոր և անհրաժեշտ ե ծովային նա-
վատորմի համար: Բայց և վոչ մի ըստե չպետք
ե մոռանալ, վոր ավիացիան ծովային նավատոր-
մին փոխարինելու անընդունակ ե:

Կապիտալիստական պետությունները լավ են
ըմբռնել այդ միաբը. ողային սպառազինումն
ուժեղացնելու հետ մեկտեղ նրանք վոչ մի ըս-
տե չեն դադարում իրենց ծովային ուժերն ել
ամրապնդելուց: Յեվ յեթե մենք ուզում ենք
իրոք ապահովել Խորհրդային Միության ծովային
սահմանների անվտանգությունը, ապա դրան մի-
միայն մի ճանապարհով կարելի յե հասնել—ան-
ընդհատ, լարգած և անդադրում կատարելա-
գործելով և ամրապնդելով ԽՍՀՄ ծովային զին-
ված ուժը:

ՆԱՎԱՏՈՐՄԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱԳԱ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ.

Այս «խաղաղությունը», վոր հաստատվեց հա-
մաշխարհային վերջին պատերազմից հետո, հաս-
տատուն չեւ Բոլոր յերկրներում ել շարունակ-
վում ե զինման աճումը: Իսկ պետություն-
ները զինվում են վոչ թե նրա համար, վոր
իրենց զինված ուժերի վրա ցնծան, այլ վոր
նրանց ոգնությամբ պատերազմեն: Որ-ավուր
ավելի յե սրվում կապիտալիստների առանձին
խմբակների պայքարը նոր շուկաներ հափշտա-
կելու համար, վորտեղ նրանք կարողանալին
իրենց ապրանքները վաճառել և գրանով հարըս-
տանալ: Անցած պատերազմի փորձը ցուց տվեց,
վոր ժամանակակից պատերազմը հակառակորդին
հնուժելու պատերազմ եւ: Այս հանգամանքն ա-
ռանձնապես շեշտում ե նավատորմի նշանակու-
թյունը ապագա պատերազմում: Յեթե նավա-
տորմին հաջողվի կտրել հակառակորդի հաղոր-
դակցության ծովային ճանապարհները մնացած

աշխարհի հետ և նրան զրկել ժամանակակից պատերազմ վարելու համար անհրաժեշտ ամենատեսակի մատակարարման, սպառագինման, սնընդամթերքի, ածխի, մետաղի անհրաժեշտ հըսկայական պաշարներ ստանալու հնարավորությունից, յեթե հաջողվի հակառակորդին կտրելիր գաղութիներից, վորոնք նույնպես բանակներն են մարդկանցով լրացնում, — նրա վիճակը վորոշած է արդեն։

Յեթե, բացի այդ, նկատի առնենք, վոր ԽՍՀՄ բանվորներն ու զյուղացիներն ապագա պատերազմում հարկադրված են իրենց շահերը պաշտպանել, վոր պատերազմն ամբողջ աշխարհում դասակարգացին կոիվը մեծապես պիտի սրի, վոր ամենուրեք աշխատավորները հրձվանքով պիտի ընդառաջեն կարմիր նավախմբին, — պարզ կլինի, թե ապագա պատերազմում ԽՍՀՄ կարմիր բանակին ինչ պատասխանատու դեր է վիճակվելու։

ԾՈՎԱՅԻՆ ԳԼԽԱՎՈՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՆԱՎԱՏՈՐՄԵՐԸ.

Այսպես կոչված «մեծ պետությունները» տեսնդագին պատրաստվում են ապագա պատերազմի համար։ Ժամանակակից հսկա նավերի կառուցման թանգությունը նրանց չի կանփնցնում, և ահազին գումարներ են ծախսվում

ծովային սպառագինությունների վրա։ Հետեւալ աղյուսակից կարելի է գաղափար կազմել ամենահզոր կապիտալիստական պետությունների ծովային ուժերի մասին։

ՆԱՎԵՐԻ ՏԻՊԵՐԻ	ԱՆԴՐԻԱ	ՀԱՅԱ ՄԻԱՅ- ՆԱՐ	ՅԱՎԻ ՀԱՅԱ	ՖՐԱՆՍ	ԻՐԱ	ԻՆԴԻ
Գծանավ գրեդնոստ	18	18	6	6	5	
» հին ափսի	—	—	—	4	2	
Գծային հածանտվ	4	—	4	—		
Հածանավ	49	31	28	10	13	
Նավախմբային ականակի	193	295	109	75	94 ²	
Ավիա-մայր	8	2	2	—	—	
Սուզանավ	65	127	79	69	42	

Այս միան գլխավոր ուժերն են։ Այս թվերի մեջ չեն մտել ներկայումս կառուցվող նավերը։ Նկատի առնելով նավատորմի շինարարության համար պահանջվող հսկայական ծախսերը՝ նոր նավերի կառուցումը, ճնացած նավերը ժամանակակիցներով վոխարինելը, անձնական կազմը պահեն ու սովորեցնելը և այլն, — վերեւում թված պետությունները 1922 թվականին Վաշինգտոն քաղաքում (Ամերիկա) կոնֆերենցիա գումարեցին և այնտեղ պայմանադրվեցին «կրճատել» ծովային սպառագինութիւնը, նավերի վերջնական թիվ՝

* Խտալիան գրանից զատ 36 մակր ականակիր ունի։

վերջնական չափսեր, հրետանու վերջնական տրամաչափ սահմանել և այն:

Վաշինգտոնի համաձայնությունը փաստորեն մի կտոր թուղթ է, զոր ուղած ըռպեցին կարող է պատովել: Վաշինգտոնում խոսողները վոչ թե իրենց սպառազինությունները սրտանց նվազեցնել ցանկացող պետություններն ենին, այ իրար հետ մրցող կապիտալիստ-հակառակորդները, վորոնք աշխատում ենին մեկնեկու խարել: Կոնֆերենցիալին մասնակցող պետություններից լուրաքանչյուրը մյուս բոլորին ապացուցում եր, թե նրանք պետք ե պակասեցնեն իրենց ծովալին սպառազինությունը, բայց թե ինը միայն այնքան ծովալին ուժ ունի, վորքան միայն հազիվ բավական է իր անվտանգությունն ապահովելու:

Ինքնին հասկանալի լե, զոր Վաշինգտոնի բանաձեւը զինաթափման մասին քոռ կոպեկի արժեք ունեն: Նրանց ընդունվում ելին, վորպեսզի չկատարվեն, և նրանց միակ գործնական նշանակությունն «իրենց» բանվորների և զյուզացիների աշքը թող փշելն եւ Ծովալին սպառազինությունը չեն պակասում, այլ սպառնազին աճում են:

Խորհրդավին պետությունը, վորն իրեն նվաճողական նպատակներ չի դնում, այնուամենալ-նիվ պիտի հաշվի առնե այդ սպառնալիքը, վոր-

պեսզի իրեն հանկարծակիի բերել չտա: Խորհրդավին պետությունը մի անգամ չի, ինչ արդեն դիմել ե կապիտալիստական պետություններին և առաջարկել իրոք և լիակատար զինաթափում: Նա այսուհետեւ ել այդ կանեւ, Բայց վոչ մի հույս չկա, թե կապիտալիստական զիշատիչներն ազ-նը վորեն կհամաձայնեն այդ բանին, կապիտալիզմն առանց պատերազմի անհնարին ե, իսկ պատե-րազմի համար սպառազինություններ են պետք: Իսկ քանի վոր կապիտալիզմի որով չի կարելի դե-նաթափման հասնել, ԽՍՀՄ աշխատավորները պետք ե կառուցեն և ամրապնդեն իրենց կարմիր սավատորմը, վորպեսզի իվիճակի լինեն կապի-տալի նավատօրմերի բուռն գրոհից պաշտպանել մեծ հեղափոխության այնպիսի զոհերի գնով ձեռք բերած նվաճությունը:

ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԸ ՅԵՎ ԽՍՀՄ ԿԱՐՄԻՐ
ՆԱՎԱՏՈՐՄԸ.

Ժամանակակից ծովալին նավատորմը տեխնիկական չափազանց բարդ կազմակերպությունն է, Նրա նորմալ շինարարությունը միայն այն ժամանակ կարող է ապահովել, յերբ յերկրում նյութական ու արդյունաբերական բավականաշափ միջոցներ կան. Ուստի և զարմանալի չե, վոր քաղաքացիական կովի ժամանակ, վոր մղում ելին խորհրդացին հանրապետությունների բանվորներն ու գյուղացիներն իրենց թշնամիների՝ կապիտալիստների, կալվածատերերի, գեներալների, ազնվականների դեմ, — նավատորմը անկան հասավ, Դրան նպաստեց քաղաքացիական կովի հետեանքով առաջացած տնտեսական և, մասնավորապես խորհրդացին հանրապետությունների արդյունաբերության վլուգումը:

Նավատորմին հարկավոր են բարդ ու թանգարժեք մեքենաներ և մեխանիզմներ, հարլուր, հաղարափոր փթերով ածուխ ու նավթ, ամենի գոր-

ծարաններ և նավաշինարաններ նավերի կառուցման ու նորոգման համար. Պետությունն այդ բոլորը չեր կարող նրան տալ քաղաքացիական կովի ժամանակ. արդյունագործությունն ավերված եր: Բացի այդ, մեր բոլոր ծովերը, բացառությամբ Բալթիկ ծովի, գրավել ելին սպիտակները, վորոնք կարեցած ամեն ինչ արին մեր նավատորմն ավերելու համար: Գեներալ Վրանգել Սև-ծովան նավատորմի մեծ մասը տարավ և հանձնեց Ֆրանսիալին, Բալթիկ, Սև ու Կասպից ծովերում մեր թշնամիները շատ նավեր ելին խորտակել: Վոչ միայն հնարավորություն չկար նավատորմին կանոնավոր լրացումը տալու, այլ, ընդհակառակը, կարմիր բանակի կազմակերպման համար վերցված եր նավաստիների լավագույն, ամենից ավելի գիտակից ու հեղափոխական մասը: Զրահագնացքներ սարքավորելու, գետային տորմիկներ կազմակերպելու համար առնված ելին ծովալին հեռահար թնդանոթները: Իհարկե, խոսք անգամ լինել չեր կարող նորմալ ուսուցման, կանոնավոր լրացումների և նավատորմը մարտական դրության մեջ պահելու համար անհրաժեշտ գործնական վարժական նավագնացության մասին:

Չնայած դրան, Բալթիական կարմիր նավատորմը քաղաքացիական կովի ժամանակ հերոտորմը քաղաքացիական կովի ժամանակ հերո-

սաբար կռվում եր խորհրդավին պետության թշնամիների դեմ: Նա պաշտպանեց Լենինգրագը անդիմական նավատորմի գրոհներից, չնայած ստիպված ելին հակառակորդի գերազանց ուժերի դեմ պարագաներ անհնարին ծանր պայմաններում:

Սակայն ավերմունքն անում եր իր գործը: Աձեն անհրաժեշտ բանի բացակայությունը չեր կարող նավատորմի վրա չանդրագառնալ: Նավերը հետզհետե «պողպատե մեռած արկղիկներ» դարձան: Նավատորմի անձնական և նկութական կազմը ծայրահեղորեն աղքատացավ: Ավերվում եր նավատորմը, քայլքայվում:

Հենց այդ քայլքայման արտահայտությունն եր 1921 թ. Կրոնշտադտի ապստամբությունը, վոր ամենասկ եջը գրեց նավատորմի պատմության մեջ:

Քաղաքացիական կովի բարեհաջող վերջավորությամբ պատկերը փոխվում եւ: Սկսեց վերածնվել լերկրի տնտեսական կանքը: Արդյունաբերությունն ել վերակենդանացավ: Յեվ այդ յեղակ Կարմիր նավատորմի վերածնության հիմքը:

Անձնական կազմի դառնամը նավատորմը մաքրեց խորթ ու նրան՝ կպած տարրերից: Պետությունը վորոշ միջոցներ հատկացրեց: Աշխատանքը չեռաց: Յեվ արդեն 1921 թ. աշնանը, Կրոնշտադտի

վողբերգության տարին, Խորհուրդների համառուսական Խ համագումարը նշեց կատարված գրական աշխատանքը և աշխատավորներին կոչ արեց վերածնել ու ամրացնել Կարմիր նավատորմը:

Խորհուրդների համագումարի կոչին արձագանցեց կոմիերիտմիությունը և նավատորմի շաբաթը ուղղեց պրոլետարական ընտրովի լերիտասարդությունը: Նավատորմի դպրոցական կյանքն սկսեց կարգի ընկնել: Կենդանացան ծովամարտիկների վարժարանները և նավատորմի հրամանատարական կազմի դպրոցները: Սկսեց վերանորոգությունը, Կարմիր բանակից և խորհրդավին հիմնարկներից սկսեցին վերադառնալ կոմմունիստ-ծովամարտիկները: Հետզհետե սկսեց վերադառնալ կայքն ու սպառազինումը: 1922 թվականի աշնանն առաջին անգամ կատարվեցին Բալթիկ Կարմիր բանակի դորաշարժերը: Այդ նավատորմի հավաքման ժամանակաշրջանն եր:

1922 թ. աշնանը ՈԿՅԵՄ Համառուսական V համագումարն ընդունեց Կարմիր նավատորմի շեֆությունը և սկիզբ դրեց նրա շինարարության նոր դարաշրջանին: Կոմիերիտմիությունն այդ ժամանականից վոչ միայն շեֆ, այլև Կարմիր բանակի գործոն շինարարը դարձավ: Պըոլետարական լերիտասարդության նորանոր լրացումները հնարավորություն տվին տուն ուղարկելու

հին հոգնած ծովամարտիկներին: Կարմիր հրամանատարների և քաղաքատավորների նոր շրջանավարտներ լեզան: Սկսեց բարելավվել նավատորմի նկութական կացությունը: Կենդանանալ սկսեցին նավահանգստները: Ամրացավ նավատորմի կապը կոմիերխամիության, կուսակցության, արհմիությունների հետ: Դրան պակաս չնպաստեց 1923 թ. սկզբին սարքած «Կարմիր նավատորմի շաբաթը», վորի ժամանակ աշխատավորների լայն մասսաները ծանոթացան կարմիր նավատորմի կացությանը և նշանակությանը և նրա առաջ դրված խնդիրներին:

1923 թ. ամառավին կամպանիան արդեն թույլ տվեց ուսուցումը ծովի վրա փոխադրել: Բալթիկ, Սև և Կասպից ծովերում փարժական նավազնացություններ սարքվեցին, վոր վերջացան զորաշարժերով: Այսպիսով Բանվորա-գուղացիական կարմիր նավատորմի հիմքը դրվեց:

1923 թ. աշնանից սկսվում է կարմիր նավատորմի կատարելագործման և մարտական ուժերի ամրացման նոր շրջանը: Խորհրդային Միության տնտեսական զորության հետագա ամրացումը հնարավորություն տվեց լավացնելու կարմիր նավատորմի տեխնիկան և սպառազինումը: Նավերը լավ վերանորոգվեցին: Նավատորմը աճելով և նավթով լիովին ապահովվեց: 1924 թ. ամա-

ռային կամպանիայի ժամանակ բոլոր ծովերում կատարած գործնական նավազնացությունները և գորաշարժերը և կարմիր նավատորմի առանձին նավերի արտասահմանան նավազնացությունները ցուց տվին, վոր կարմիր նավատորմն զգալիորեն ամրապնդվել եւ ահեղ ուժ եւ ներկայացնում, վոր հարկ լեղած հականարվածը կտա այն ամենքին, ովքեր կհամարձակվեն ԽՍՀՄ ծովային սահմանների վերաբերմամբ չարամիտ փորձ աներ:

1924 թ. աշնանից մինչև 1925 թ. աշունը կարմիր նավատորմի լարված շինարարության, ուսուցման և մարզանքի ըջաններ: Յեկ Բալթիկ ծովի նավատորմի 1925 թ. աշնան մեծ գորաշարժերն արդեն կատարվում ենին հեռավոր բաց ծովում, իր բազաներից նարյուրավոր միջնների վրա:

Ցարական նավատորմի բեկորներից, գրեթե վոչնչից, փոքրիկ, բայց ամուր կարմիր նավատորմ ստեղծելն ահադին աշխատանք պահանջեց: Այդ աշխատանքը հաջողությամբ կարելի լեր կատարել միմիայն աշխատավորների, առաջին հերթին բանվոր լերիտասարդության առաջապահի, լերիտասարդ լենինյան-կոմիերխիտականների ուժանդակությամբ, վորոնք կարմիր նավատորմի անձնական կազմի գրեթե կեսն են կազմում: Կարմիր նավատորմի վոգին այժմ ավելի առողջ ու ամուր ե, քան լերը և: Այդ իրոք կոմիերխիտական

վողի յեւ։ Այդ իսկական լենինյան նավատորմ եւ։

Կարմիր նավատորմի շինարարության ասպարիզում հասած արդյունքները զարմացրել են թե բարեկամներին և թե թշնամիներին։ Սակայն չի կարելի արածով հանգստանար Դեռ ավելի շատ բան կա անելու։

Բայց ամենազժգարինը լետիներս հնք թողել։

Այժմ վերածնված և ամրապնդված կարմիր նավատորմը լավագույն ապացուցն ե այն բանի, թե ինչի կարող են հասնել աշխատավորները, իբր իշխանությունն իրենց ձեռքին եւ։

Կարմիր նավատորմի կատարելագործման և մարտական ուժերի ամրացման առաջիկա աշխատանքը պետության, Համեկ, կոմէքիտմիտության և մեր Միության բոլոր աշխատավորների ոժանդակությամբ փայլուն նվաճումներ ե խոստանում։ Յեվ յերբ աշխատավորները կոչ անեն կարմիր նավատորմին իր մարտական պարագը կատարելու, նա հպարտությամբ պարզած հեղափոխական կարմիր դրոշակով և իր ուժերի լիակատար հավատով վերջին, վճռական ու հաղթական մարտի կդնա աշխատավորների թշնամիների դեմ—հանուն աշխատանքի լիակատար ազատազրության, հանուն կոմմունիզմի, հանուն բանվորների ու գյուղացիների իշխանության ամբողջ աշխարհում։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Ենչո՞ւ համար և հարկագոր մեզ նավատորմը	3—17
Կարմիր նավատորմի նշանակությունը ծովային սահմանների պաշտպանության և արտաքին առեւտի համար	3
Բալթիկ ծովի կարմիր նավատորմը	6
Սև-ծովյան կարմիր նավատորմը	11
Կասպից ծովի ծովային ուժերը	15
Հեռավոր Արևելյան նավատորմը	17
Ժամանակակից նավատորմը	18—29
Նավերը	18
Ծովային զենքը	26
Նավատորմի անձնական կազմի նախապահությունը	30—35
Քաղաքական աշխատանքը Կարմիր նավատորմում	36—45
Նավատորմը հեղափոխական շարժման մեջ	46—57
Մովային յեվ ոգային նավատորմեր	58—68
Նավատորմի նախակուրյունը ապագա պահպանությունը	69—73
Աշխատավորներ յեվ ԽՍՀՄ Կարմիր նավատորմը	74—80

ՀՀ Ազգային գրադարան



NL0227086

"42. 613



ԳԻՒԾ 20 Կ.